

---

**Արցախի Հանրապետության հիմնահարցի միջազգային-իրավական  
ասպեկտները հետազոտող**

**Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի  
փորձագիրական խումբ**



## **ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ**

**ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԴՐԵՋԱՆԱԿԱՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԹՈՒՅԼ ՏՐՎԱԾ ՄԻԶԱՉԳԱՅԻՆ  
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

---

<b>ՆԱԽԱԲԱՆ .....</b>	<b>3</b>
<b>ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԽՈՒՄԲ .....</b>	<b>4</b>
<b>I. ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՆՔ .....</b>	<b>5</b>
<b>II. ԱՐՑԱԽԻ ԺՈՂՈՎՐԴԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՀԱՆՁԸ .....</b>	<b>10</b>
1. Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը.....	10
2. Աղրբեջանը չի կարող վկայակոչել uti possidetis juris սկզբունքն Արցախի Հանրապետության նկատմամբ տիտղոս հաստատելու կամ Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը հերքելու համար.....	12
<b>III. ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ .....</b>	<b>14</b>
1. Ատելության խոսք և ռասխատական քարոզություն Աղրբեջանի պետական իշխանությունների կողմից .....	14
2. Լրատվամիջոցներում և համացանցում ատելության և թշնամության քարոզություն.....	23
<b>IV. 2016 թ. ԱՊՐԻԼԻ 2-5-Ի ԴԵՊՔԵՐԸ .....</b>	<b>29</b>
<b>V. ԱՊՐԻԼՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԻՋԱՇԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈԴԻՑ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ .....</b>	<b>32</b>
<b>ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ .....</b>	<b>34</b>

## ՆԱԽԱԲԱՆ

---

Արցախի Հանրապետության հիմնահարցի միջազգային-իրավական ասպեկտները հետազոտող Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի փորձագիտական խումբը ստեղծվել է հանրությանը Արցախի Հանրապետության (այսուհետ տեքստում նաև՝ **Արցախ, ԼՂՀ, ԼՂԻՄ**) հիմնահարցի հետ կապված վերլուծություն ներկայացնելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական իրավասու մարմնին մասնագիտական խորհրդատվությամբ օժանդակելու նպատակով: Խմբի ստեղծումը պայմանավորված էր աղբբեջանական գինված ուժերի կողմից Արցախի խաղաղ բնակչության և պաշտպանության բանակի գինվորների նկատմամբ 2016թ. ապրիլի 2-5-ն ընկած ժամանակահատվածում կատարված դաժանություններին միջազգային-իրավական գնահատական տալու անհրաժեշտությամբ:

Սույն մասնագիտական կարծիքում ներկայացված է Աղբբեջանական պետության (այսուհետ տեքստում նաև՝ **Աղբբեջան**) հայատյաց քաղաքականությունը, Աղբբեջանի կողմից հայկական ծագում ունեցող մարդկանց նկատմամբ ատելության և բռնության դրդելու մասին վկայող՝ միջազգային հեղինակավոր կազմակերպությունների օբյեկտիվ գնահատականները, ինչպես նաև ներկայացված է ատելության քարոզը զանգվածային լրատվության միջոցներում և սոցիալական ցանցերում: Վեր են հանված Աղբբեջանի և մասնավորապես վերջինիս գինված ուժերի կողմից 2016թ. ապրիլի 2-5-ն ընկած ժամանակահատվածում կատարված միջազգային հանցագործությունները, միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի կոպիտ խախտումները: Այդ տեսանկյունից են վերլուծված 2016թ. ապրիլի 2-5-ն ընկած ժամանակահատվածում քաղաքացիական խաղաղ բնակչության և քաղաքացիական օբյեկտների նկատմամբ ուղղորդված և նախապես պլանավորված հարձակումների, ինչպես նաև վերջինների և Արցախի պաշտպանության բանակի գինծառայողների նկատմամբ իրականացված անմարդկային վերաբերմունքի դեպքերը:

## ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԽՈՒՄԲ

---

Մասնագիտական կարծիքի մշակման աշխարհանքներին մասնակցել են և մասնագիտական կարծիքը Փորձագիտական խմբի համարեղ քննարկմանը ներկայացրել են հեղույալ անձինք (փորձագիտական խումբ):

- 1. փաստաբան, ի.գ.թ.** **Էմիլ ԱՄԻՐԻԽԱՆՅԱՆ**
- 2. փաստաբան, ի.գ.թ.** **Սիմոն ԲԱԲԱՅԱՆ**
- 3. փաստաբան, ի.գ.թ.** **Լևոն ԳԵՎՈՐԳՅԱՆ**
- 4. փաստաբան, ի.գ.թ.** **Արա ԶՈՀՐԱԲՅԱՆ**
- 5. փաստաբան, ի.գ.թ.** **Արա ԽՉՄԱԼՅԱՆ**
- 6. փաստաբան, ի.գ.թ.** **Եղիշե ԿԻՐԱԿՈՍՅԱՆ**
- 7. փաստաբան** **Նելլի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
- 8. փաստաբան, ի.գ.թ.** **Զինավոր ՄԵՂՐՅԱՆ**
- 9. փաստաբան, ի.գ.թ.** **Տարոն Վ. ՍԻՄՈՆՅԱՆ**
- 10. իրավաբան, ի.գ.թ.** **Գևորգ ՏՈՒՄԱՆՈՎ**
- 11. փաստաբան, ի.գ.թ.** **Արամ ՕՐԲԵԼՅԱՆ**

## I. ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՆՔ

Հայ-ադրբեջանական հարաբերությունները պատմական և քաղաքական պատճառներով այժմ գտնվում են սուր հակամարտության վիճակում: Երկրների միջև պաշտոնական դիվանագիտական հարաբերություններ այժմ հաստատված չեն: Հարևան երկրները պաշտոնական հարաբերություններ են ունեցել 1918-1921 թվականներին, երբ կարճատև անկախություն ստացան Ռուսական կայսրությունից, որի արդյունքում ծևավորվեցին Հայաստանի Դեմոկրատական Հանրապետությունը և Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունը: Այդ հարաբերությունները գոյություն ունեին սկսած 1917 թվականի Ռուսական հեղափոխությունից մինչև Անդրկովկասի գրավումը բոլշևիկյան իշխանության կողմից:

Պատմական հնագույն ժամանակներից սկսած՝ Արցախը, ինչպես վկայում են հնագիտական, պատմական ու լեզվագիտական նյութերը, պատմաաշխարհագրական առումով Հայկական լեռնաշխարհի մաս է կազմել և ընդգրկված է եղել նրա ընդհանուր էթնիկական, քաղաքական ու մշակութային ոլորտների մեջ: Այն մթա. 1-ին հազարամյակի սկզբից մինչև 13-րդ դար եղել է համահայկական պետական կազմավորումների կազմում, այնուհետև, համահայկական պետականության անկումից հետո, ընդհուպ մինչև 19-րդ դարի սկզբին Ռուսական կայսրության կողմից Անդրկովկասի նվաճումը, եղել է տեղական հայկական իշխանությունների կառավարման ներքո:

Հայկական Արցախի նկատմամբ միջազգային հանրության շրջանում առավել հայտնի «Ղարաբաղ» անվանումը առաջին անգամ սկսել է կիրառվել 13-14-րդ դդ. մոնղոլական նվաճումների դարաշրջանում: Արցախը գրեթե բացառապես հայաբնակ է եղել մինչև 18-րդ դարի կեսերը, երբ արևելյան շրջաններից սկսել են ներթափանցել թուրքալեզու որոշ ցեղեր՝ չփոխելով սակայն երկրամասի ժողովրդագրական ընդհանուր պատկերը:

Մինչև 1917թ. բոլշևիկյան Հռկտեմբերյան հեղաշրջումը Ռուսական կայսրության կազմում գտնվելով՝ Արցախն այնուհետև գտնվում էր Անդրկովկասի դաշնային իշխանությունների կառավարման ներքո: 1918թ. մայիսին Հայաստանի առաջին Հանրապետության ստեղծումից հետո այն իրեն հոչակեց որպես նախկին Ռուսական կայսրության բոլոր հայկական գավառների միակ ու գերագույն իրավատեր: Մյուս կողմից, սակայն, նորաստեղծ Ադրբեջանը, հավակնելով Արցախին և Արևելյան Հայաստանի այլ տարածքների, Օսմանյան Թուրքիայի ռազմաքաղաքական աջակցությամբ 1918-1920թթ. փորձում էր ամեն կերպ տիրանալ երկրամասին՝ հակառակ բնակչության շուրջ 95 %-ը կազմող հայության կամքին ու պատմական իրողություններին:

Ադրբեջանը հենց սկզբից իր իշխանությունը ճանաչելու պահանջով դիմում է Արցախի հայության ներկայացուցիչներին: Սակայն, վերջինիս կողմից 1918թ. հունիսի

22-ին Շուշիում հրավիրված **Արցախի հայերի 1-ին համագումարը** ոչ միայն մերժում է այդ պահանջը, այլև, **հիմք ընդունելով Ազգերի ինքնորոշման իրավունքը**, երկրամասը հոչակում է անկախ վարչաքաղաքական միավոր, ժողովրդավարական սկզբունքներով և ընթացակարգերով ընտրվում է երկրամասի հայության Ազգային խորհուրդ և ժողովրդական կառավարություն:

1918թ. հուլիսի 24-ին ընդունվում է Ղարաբաղի ժողովրդական կառավարության հոչակագիրը, որտեղ շարադրված էին նորաստեղծ պետական իշխանության խնդիրները: Դրան հետևում է Ադրբեջանում գտնվող **թուրքական զորքերի հրամանատարության վերջնագիրը** Ազգային խորհրդին՝ ընդունելու Ադրբեջանի իշխանությունը: Ի պատասխան վերջնագրի՝ 1918թ. սեպտեմբերին հրավիրված Ղարաբաղի հայերի 2-րդ համագումարը կրկին կտրականապես մերժում է այդ պահանջը: Ադրբեջանի անօրինական պահանջները մերժող որոշումներ են ընդունվել նաև Արցախի հայերի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ համագումարներում:

1919թ. օգոստոսին կայացած 7-րդ համագումարում, Արցախի շուրջ Ադրբեջանի զորքերի կենտրոնացման և ռազմական ակնհայտ սպառնալիքների պայմաններում, որոշում է ընդունվում **ժամանակավորապես**, մինչև Փարիզի խաղաղության վեհաժողովի որոշումը, ճանաչել Ադրբեջանի գերիշխանությունը: Սակայն, հաջորդ իսկ՝ 8-րդ համագումարում մերժվում է Ադրբեջանի սուվերենությունը Արցախի նկատմամբ վերջնականապես ճանաչելու պահանջը: Դրան հաջորդում է Ադրբեջանի զորքերի ներխուժումը Արցախ (1920թ. մարտ) և Շուշի քաղաքի հրկիզումն ու ավելի քան 20 հազար հայերի կոտորածը Շուշիում: Արցախի ինքնապաշտպանական ուժերը դիմում են Հայաստանի Հանրապետության օգնությանը, իսկ 1920թ. ապրիլին կայացած **9-րդ համագումարն Արցախը հոչակում է Հայաստանի Հանրապետության անքաժան մասը**: Մի քանի օր անց Խորհրդային Ռուսաստանի զորքերն Ադրբեջանում հաստատում են Խորհրդային իշխանություն, և փորձելով Ադրբեջանի միջոցով խորհրդային իշխանությունը հաստատել ողջ Անդրկովկասում, ձգտում են Արցախը ներառել Խորհրդային Ադրբեջանի կազմում և ռազմական սպառնալիքով վերջնագիր է ներկայացվում Արցախում իր օրինական իշխանությունը հաստատել փորձող Հայաստանի Հանրապետությանը:

1920թ. մայիսին Ղարաբաղի հայերի 10-րդ համագումարում, որի պատվիրակների հիմնական մասը կոմունիստներ էին, Արցախը հոչակվում է խորհրդային, սակայն կրկին չի հաստատվում Խորհրդային Ադրբեջանի իշխանությունը: 1920թ. աշնանը ռուսական խորհրդային զորքերը ճնշում են արցախահայության համաժողովրդական ապստամբությունը: Նոյեմբերի 30-ին՝ Հայաստանում ևս խորհրդային կարգեր հոչակվելու հաջորդ օրը, Ադրբեջանի խորհրդային կառավարությունը հատուկ հոչակագրով՝ 1920 թվականի դեկտեմբերի 1-ի Ադրբեջանական ՍՍՀ-ի Դեկրետով Հայաստանի հետ վիճելի համարվող Լեռնային

Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը **ճանաչում է Խորհրդային Հայաստանի անքաժան մասերը**: Սակայն, շատ շուտով Ադրբեջանը հետ է կանգնում իր այդ քայլից:

1921թ. հունիսի 12-ի Դեկրետով Հայկական ՍՍՀ-ն Լեռնային Ղարաբաղը հոչակում է իր տարածքի անքաժան մաս:

Այսպիսով, երկու պետությունների իրավասու մարմինների կողմից հայտարարվեց և իրավաբանորեն ձևակերպվեց միջազգային համաձայնագիր՝ կամավոր հայտարարված հոչակագրերի միջոցով: Ադրբեջանի իշխանությունների բողոքներից հետո Կովկասի կոմունիստական մարմնի նիստում քվեարկությամբ դարձյալ որոշվում է Արցախը ճանաչել Հայաստանի մաս: Ադրբեջանի ղեկավարության նոր բողոքներից հետո այդ որոշման հաջորդ օրը՝ հունիսի 5-ին, Իոսիֆ Ստալինի անմիջական միջամտությամբ, առանց որևէ քվեարկության, ապօրինի որոշում է ընդունվել Արցախը Ադրբեջանի կազմում թողնելու մասին: 1923թ. ստեղծվել է Ադրբեջանական ԽՍՀ կազմում Լեռնային Ղարաբաղի հնքնավար Մարզը՝ շատ ավելի փոքր տարածքի վրա, քան ընդգրկում էր ամբողջ Լեռնային Ղարաբաղը՝ արհեստականորեն զրկվելով Հայաստանի հետ ընդհանուր սահմանից: Այսպիսով, **94,4% կազմող** հայ բնակչությամբ Լեռնային Ղարաբաղը ապօրինաբար տրվում է Խորհրդային Ադրբեջանին: Ռուսաստանյան կումունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի Կավբյուրոյի Որոշումը հենց սկզբից չուներ ոչ մի իրավական հիմք, իրավաբանական ուժ, քանի որ երրորդ պետության կուսակցական մարմինը իրավասու չիր լուծել միջավետական տարածքային հարց:

1923-1988թթ. Ադրբեջանի խորհրդային իշխանությունները Ղարաբաղի հայ բնակչությանը ենթարկել են քաղաքական, տնտեսական, ազգային հալածանքների, շարունակաբար վարել են մարզը հայաթափելու միտումնավոր քաղաքականություն: Սակայն արցախահայությունը մշտապես պայքարել է Ադրբեջանի կազմից մարզը դուրս բերելու և Հայաստանի հետ վերամիավորվելու համար (1965թ. այդ նպատակով Մոսկվային հղված հանրագիրը ստորագրել է ավելի քան 45 հազար մարդ): Ադրբեջանի ղեկավարությունը գործադրել է բոլոր ջանքերը՝ հարցի քննարկումը կանխելու համար:

1987թ. վերջին հատուկ հանրագրով, որը ստորագրել էր 80 հազար մարդ, ՀՂԻՄ-ի բնակչությունը կրկին դիմում է Հայաստանի հետ վերամիավորման պահանջով: 1988թ. փետրվարի 20-ին Ղարաբաղի տեղական ինքնավարության մարմինը միաձայն որոշում է ընդունում՝ Հայկական ԽՍՀ հետ վերամիավորման մասին, ինչին համաձայնություն է տալիս նաև Խորհրդային Հայաստանի օրենսդիր իշխանությունը: Արցախի որոշմանը հետևել է Ադրբեջանի կազմակերպած հայերի ջարդերը Սումգայիթ, Կիրովաբադ և այլ քաղաքներում, որը սակայն համարժեք քաղաքական գնահատական չի ստացել Կրեմլի կողմից՝ դրանով իսկ աջակցելով Ղարաբաղյան հարցի վերաբերյալ ադրբեջանական դիրքորոշմանը: Հովհանն Խորհրդային կենտրոնական իշխանությունները մերժել են հաստատել Արցախի և Հայաստանի վերամիավորման մասին դիմումները: Դրանից հետո իրավիճակը ավելի

ճգնաժամային է դարձել, հաճախակի են դարձել ադրբեջանցիների զինված հարձակումները Արցախի հայերի վրա:

1989թ. հունվարին ԽՍՀՄ իշխանությունների կողմից ԼՂԻՄ-ը դրվել է կենտրոնական իշխանության ուղղակի ենթակայության տակ (միևնույն ժամանակ պահպանելով «Լեռնային Ղարաբաղի» որպես ԱԽՍՀ կազմում ինքնավար մարզի կարգավիճակը»), սակայն Արցախի հայության ֆիզիկական անվտանգության պահպանման, տնտեսական, մշակութային և այլ խնդիրներին ոչ մի բավարար լուծում չի տրվել: ԽՍՀՄ ղեկավարությունը և անձամբ Խորհրդային Միության առաջնորդ Մ. Գորբաչովը ձգտում էին կտրուկ քայլերով ճնշել Արցախում և Հայաստանում ազգային պայքարը, որը աստիճանաբար թափ առավ որպես «Ղարաբաղյան շարժում»: 1989թ. դեկտեմբերի 1-ին Հայաստանի իշխանություններն ընդունել են Հայկական ԽՍՀ և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին որոշումը, սակայն շուտով ԽՍՀՄ գերազայն իշխանությունները չեղարկել են այն: Նույն օրը՝ 1990թ. հունվարի 10-ին, և հետագա 3 օրերին Ադրբեջանը Բաքվում կազմակերպել է տեղի հայության զարդ և բռնագաղթ, հարձակումներ են եղել արցախահայության նկատմամբ: Դրանից հետո Ադրբեջանը և Մոսկվան ավելի են խստացրել Արցախի հայության դեմ ճնշումները, սակայն Արցախյան ազգային շարժումը ավելի ծավալվեց:

1990թ. երկրորդ կեսին ԼՂԻՄ վիճակը ավելի է բարդացել. մի կողմից շարունակվում էր մարզի շրջափակումը Ադրբեջանի կողմից, մյուս կողմից մարզի իրական իշխանությունը հայտնվում է խորհրդային զինվորականության ծեռքին: 1991թ. սկզբից սկսած, ԽՍՀՄ ղեկավարության աջակցությամբ, օգտագործելով խորհրդային զինված և ոստիկանական ուժերը, Ադրբեջանը ձգտում էր ռազմական մեթոդներով իր օգտին լուծել հարցը՝ հարձակումներ ու բռնի տեղահանություններ կազմակերպելով հայկական մի շարք բնակավայրերի ու ամբողջական շրջանների դեմ: Ադրբեջանական զինված հարձակումներ էին կազմակերպվում նաև անմիջապես Հայաստանի սահմաններին: Արցախի շուրջ հայ-ադրբեջանական հակամարտությունը դեռևս ԽՍՀՄ գոյության ընթացքում վերածվեց զինված բախումների շղթայի, իսկ ԽՍՀՄ կազմալուծումից հետո՝ իրական լայնամասշտաբ պատերազմի:

Դեռևս 1991թ. սեպտեմբերի 2-ին ԼՂԻՄ ժողովուրդն ինքնորոշվում է և սեփական անվտանգությունը պաշտպանելու և խաղաղ զարգացումն ապահովելու նպատակով **հոչակվում է Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետությունը**: Ադրբեջանը պատասխանում է հայկական խաղաղ բնակավայրերի անընդհատ հրետակոծումներով ու զինված հարձակումներով, լիակատար շրջափակումով: 1992թ. սկզբին ադրբեջանական զինուժն անընդհատ հրետակոծության է ենթարկում Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտը՝ պատճառելով մարդկային ու նյութական մեծ կորուստներ: Արցախի ինքնապաշտպանական ուժերը, դիմագրավելով այդ հարձակումները, չեզոքացնում են հակառակորդի կրակակետերը, իսկ մայիսի 9-ին ազատագրվում է Շուշին, ապա Լաչինը՝ մարդասիրական միջանցք բացելով դեպի

Հայաստան: Այնուիետև ծանր պատերազմում Արցախի ինքնապաշտպանական ուժերը կարողացան պարտության մատնել Արցախի տարածքի մյուս մասերը զավթած ադրբեջանական ուժերին և այդ տարածքների մեծ մասն ազատագրել, սակայն 1993-1994թթ. Ադրբեջանի ռազմամոլության և ամեն գնով Արցախը նվաճելու քաղաքականության հետևանքով, ռազմական գործողությունները շարունակվեցին նախկին ԼՂԻՄ-ին հարակից և պատմական Արցախ երկրամասի մասը կազմող մի շարք շրջաններում: Ի վերջո, շարունակական ռազմական պարտությունները ստիպեցին Ադրբեջանի ղեկավարությանը՝ 1994թ. մայիսին ընդունել Ռուսաստանի միջնորդությամբ արված զինադադարի առաջարկը. հաստատվեց «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» բնորոշումը ստացած իրավիճակ, որը ձգվում է ավելի քան 20 տարի:

1994թ. մայիսի 5-ին Բիշբեկում Ռուսաստանի, Ղըրղզստանի և ԱՊՀ միջխորհրդարանական խորհրդաժողովի միջնորդությամբ Ադրբեջանի, Արցախի և Հայաստանի խորհրդարանների ղեկավարները ստորագրել են արձանագրություն, ըստ որի համաձայնություն է ձեռք բերվել կրակի դադարեցման վերաբերյալ: Բիշբեկյան արձանագրությանն Ադրբեջանը միացել է ավելի ուշ՝ մայիսի 8-ին: Ռուսաստանի միջնորդությամբ կրակի դադարեցման վերաբերյալ համաձայնագիրը Հայաստանի, Արցախի և Ադրբեջանի պաշտպանության գերատեսչությունները ստորագրել են մայիսի 11-ին: Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1994թ. մայիսի 12-ին: Ադրբեջանի կողմից բիշբեկյան համաձայնության խափանումից հետո գործին միջամտել է ՌԴ պաշտպանության նախարար Պ. Գրաչովը, նպատակ ունենալով դադարեցնել զինված հակամարտությունը՝ մնացած հարցերի լուծումը թողնելով քաղաքագետներին: 1994թ. մայիսի 16-ին Մոսկվայում հանդիպելով ՀՀ պաշտպանության նախարար Ս. Սարգսյանի, ՀՀ պետնախարար Վ. Սարգսյանի, Արցախի ՊԲ հրամանատար Ս. Բաբայանի և Ադրբեջանի պաշտպանության նախարար Մ. Մամեդովի հետ՝ նա առաջարկել է **1994թ. մայիսի 17-ի 00:00 ժամից դադարեցնել կրակը**: Այն մեծ դժվարությամբ ընդունել է նաև Ադրբեջանը և մեկ ամիս անց տվել իր համաձայնությունը: Պարտադրված հրադադարը որոշ խախտումներով պահպանվում էր մինչև 2016թ-ի ապրիլին Ադրբեջանի կողմից լայնածավալ ռազմական գործողություններ սկսելը:

Անկախ Հայաստանի և Ադրբեջանի միջև հարաբերությունները, որպես այդպիսին, ձևավորվել են 1918-1920թթ., և 1988-1994 թթ. Արցախի ու Ադրբեջանի միջև պատերազմների ընթացքում, և այժմ էլ շարունակվում են՝ պայմանավորված լինելով պատմական այդ հրադարձություններով:

## II. ԱՐՑԱԽԻ ԺՈՂՈՎՐԴԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՀԱՆՁԸ

---

### 1. Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը

Ազգերի ինքնորոշման սկզբունքը հանդիսանում է միջազգային իրավունքի հիմնարար սկզբունք,<sup>1</sup> և լայնորեն ճանաչված է որպես միջազգային իրավունքի իմպերատիվ նորմ,<sup>2</sup> որն առաջացնում է *erga omnes* պարտավորություններ<sup>3</sup>:

Այս իրավունքը պատկանում է անմիջապես ազգին, և նրա կողմից կարող է իրականացվել, այդ թվում որոշակի պետությունից անջատվելու, այսպես կոչված, «արտաքին ինքնորոշման» միջոցով:

Համաձայն Միջազգային իրավունքի սկզբունքների մասին բանաձևի (որը լայնորեն ճանաչված է որպես միջազգային իրավունքի սկզբունքների կողիֆիկացիա)<sup>4</sup>՝ ազգերի արտաքին ինքնորոշման իրավունքը սահմանափակվում է ինքնիշխան պետությունների տարածքային ամբողջականությամբ միայն այնքանով, որքանով վերջիններս հարգում են տվյալ ազգի ինքնորոշման իրավունքը:<sup>5</sup> Համապատասխանաբար, ինչպես ծևակերպել է Կանադայի *Գերագույն դատարանը Re Secession of Quebec* գործով. «Երբ ազգը ենթարկվում է ճնշումների ... կամ երբ նույնականացվող խմբին մերժում են ողամիկ կառավարման համակարգի ողամիկ հասանելիությունը՝ իր քաղաքական, գոնդեսական, սոցիալական և մշակութային զարգացմանը ծգրելու համար ... համապատասխան ազգն իրավունք ունի արդարին ինքնորոշման, քանի որ նրան մերժվել է իր ինքնորոշման իրավունքը ներքին մակարդակով իրականացնելու հնարավորությունը»<sup>6</sup>:

Կոսովոյի անկախացմանը վերաբերող պետական պրակտիկան լրացուցիչ վկայում է այն մասին, որ միջազգային հանրությունը ճանաչում է, որ ինքնորոշման սկզբունքի շրջանակներում թույլատրվում է անկախացումը, եթե համապատասխան ազգը չի կարող կենսունակ կերպով իրականացնել իր ինքնորոշման իրավունքը գոյություն ունեցող պետության տարածքի սահմանում:

Այս կանոնն առավել ևս կիրառելի է այն դեպքերի նկատմամբ, երբ պետության սահմանների ներքո գտնվելը սպառնում է համապատասխան ազգի բուն գոյատևմանը, ինչի հետ գործ ունենք Ադրբեջանում հայերի դեպքում՝ հաշվի առնելով Ադրբեջանի կողմից հայերի հետապնդման քաղաքականությունը:

<sup>1</sup> UN GA Res. 2625, U.N., GAOR, 25th Sess., Supp. No. 28, p. 124; 1970 U.N.Y.B. 787, U.N. Sales No. E.72.I.1; Hurst Hannum, *Autonomy, Sovereignty, and Self-Determination: The Accommodation of Conflicting Rights*, (1990), p. 45.

<sup>2</sup> Ian Brownlie, *Principles of Public International Law* (4th ed. 1990), pp. 595-98; Antonio Cassese, *Self-Determination of Peoples. A Legal Reappraisal*, Cambridge, N.Y., 1995, p. 320; Hector Gros Espiell, *The Right of Self-Determination: Implementation of United Nations Resolutions*, U.N. Doc. E/CN.4/Sub2/405/Rev. 1 (1980), p. 8

<sup>3</sup> Case Concerning East Timor (Portugal vs. Australia), ICJ Reports, 1995, p. 102

<sup>4</sup> UN GA Resolution 2625, 1970 U.N.Y.B. 787, U.N. Sales No. E.72.I.1

<sup>5</sup> G.A. Res. 2625, U.N., GAOR, 25th Sess., Supp. No. 28, p. 124

<sup>6</sup> Reference Re Secession of Quebec [1998] 2 S.C.R. 280-81

Արցախի ժողովուրդն իր ինքնորոշման իրավունքն իրագործել է դեռ 1991 թվականին՝ 1987-1990 թվականների ընթացքում Սումգայիթի, Գանձակի, Բաքվի հայ բնակչության ջարդերի ու տեղահանությունների, Հյուսիսային Արցախի բնակավայրերում հայերի դեմ բռնությունների ու տեղահանությունների և հայերի դեմ ուղղված այլ բռնություններից հետո, երբ ակնհայտ էր Ադրբեջանի կազմում հայերի հետագա խաղաղ ու անվտանգ գոյատևման ու ներքին ինքնորոշման անհնարինությունը:

Այս պարագայում Արցախի ժողովուրդի կողմից ինքնորոշման իրավունքի իրականացումը միանգամայն իրավաչափ էր միջազգային իրավունքի շրջանակներում:

Ադրբեջանը չի կարող, ի հերթում դրա, վկայակոչել տարածքային ամբողջականության սկզբունքը, քանի որ՝

1. Արցախն իր ինքնորոշման իրավունքն իրականացրել է Ադրբեջանի անկախացմանը գուգահեռ, և Արցախը, ի սկզբանե, չի կազմել Ադրբեջանի տարածքի մաս, և ուստի դրա անկախացումը, ի սկզբանե, չի կարող համարվել Ադրբեջանի տարածքային ամբողջականության խախտում.
2. որպես այլընտրանք, ըստ վերոնշյալ 2526 բանաձևի, տարածքային ամբողջականությունը նույնիսկ երրորդ պետությունների հանդեպ չի կարող վկայակոչվել՝ որպես ազգերի ինքնորոշման սկզբունքը սահմանափակող, եթե համապատասխան պետությունը չի հարգում ազգերի հավասարությունն ու ինքնորոշման սկզբունքը, և առանց որևէ խորականության կամ տարբերակման չի ներկայացնում ինքնորոշվող ազգի շահերը:

Ի լրումն նշվածի, ինչպես արդեն իսկ հաստատվեց վերոգրյալ փաստերով, արդեն Արցախյան պատերազմից հետո Ադրբեջանը ոչ միայն չի հարգել Արցախի հայության ինքնորոշման իրավունքը, այլ թույլ է տվել ու անմիջապես իրականացրել է նրանց լայնածավալ հետապնդումներ ու էթնիկ զտումներ, որի ուժով կորցրել է Արցախի ժողովուրդի ինքնորոշման իրավունքի դեմ իր տարածքային ամբողջականությունը վկայակոչելու իրավունքը:

Ավելին, Արցախի ժողովուրդի ինքնորոշման իրականացումից ի վեր Ադրբեջանական Հանրապետությունը շարունակել է հայերի հետապնդումների քաղաքականությունը և, մասնավորապես, վերջին տարիներին ձեռնամուխ է եղել համատարած հայատյացության քարոզման քաղաքականությանը, ինչն, ի թիվս բազմաթիվ այլ դրսենորումների, արտահայտվել է հայերի սպանություն գործող անձանց հերոսացման, հայկական մշակութային արժեքների ոչնչացման և առհասարակ հայերի՝ իրենց պատմական բնակության տարածքներում գոյության իրավունքի մերժման միջոցով: Անդրադառնալով վերջին դեպքերին՝ հարկ է ընդգծել որ 2016 թվականի ապրիլի սկզբին Ադրբեջանական Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության դեմ նախաձեռնված գինված հարձակման շրջանակներում Ադրբեջանի գինված ուժերի վերահսկողության տակ ընկած բոլոր քաղաքացիական

անձինք ու պատերազմական գործողություններին մասնակցությունը դադարեցրած զինվորականները, առանց որևէ ռազմական անհրաժեշտության, սպանվել են, իսկ նրանց դիակները ենթարկվել են խեղումների ու որոշ դեպքերում նաև հրապարակային անարգանքի, մինչդեռ նշված արարքների (որոնք հանդիսանում են ռազմական հանցագործություններ ըստ միջազգային իրավունքի) համար պատասխանատու անձինք բացահայտորեն քաջալերվել ու պարզեատրվել են Ադրբեջանական Հանրապետության իշխանությունների կողմից, ինչը ևս մեկ ապացուց է այն փաստի, որ ազգությամբ հայերի գոյատևումը Ադրբեջանական Հանրապետության կազմում անհնար է:

Նշվածը ևս բացառում է Արցախի հայությանը որևէ եղանակով Ադրբեջանի իրավագործության ներքո բերելու հնարավորությունը, որ ևս մեկ անգամ հաստատում է Արցախի Հանրապետության ինքնորոշման այլընտրանք չունեցող բնույթը:

## 2. Ադրբեջանը չի կարող վկայակոչել սի պօսիդետիս յուրիս սկզբունքն Արցախի Հանրապետության նկատմամբ տիտղոս հաստատելու կամ Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը հերքելու համար

Ադրբեջանը վերջին շրջանում պարբերաբար վկայակոչում է *uti possidetis juris* սկզբունքն Արցախի Հանրապետության նկատմամբ իր ենթադրյալ տիտղոսը հաստատելու ու Արցախի Հանրապետության ինքնորոշման իրավունքը հերքելու համար: Այս սկզբունքի համաձայն ապագաղութացման ընթացքում նախկին գաղութների վարչական սահմաններն ինքնաբերաբար վերածվում են նրանց միջև միջազգային միջապետական սահմանների: Սակայն այս սկզբունքը ունի սահմանափակ ճանաչում ու կիրառում միջազգային իրավունքում, ու կիրառելի չէ Արցախի Հանրապետության նկատմամբ:

Այսպես, արդարադատության միջազգային դատարանը (ԱՄԴ) *Բուրկինա Ֆասոն ընդդեմ Մալիի Հանրապետության* գործով հաստատել է, որ *uti possidetis juris* սկզբունքը կիրառելի է ապագաղութացման համատեքստում:<sup>7</sup>

Ժամանակակից միջազգային իրավունքում չկա որևէ հիմք այս սկզբունքը ապագաղութացման համատեքստից դուրս (մասնավորապես՝ դաշնային պետությունների կազմալուծման կամ օտարերկրյա օկուպացիայի դադարեցման դեպքերում) կիրառելու համար:

Տվյալ դեպքում Ադրբեջանն իր անկախությունը 1991թ. ձեռք է բերել ոչ թե ապագաղութացման գործընթացի շրջանակներում, այլ պարզապես ԽՍՀՄ կազմալուծման, կամ, որպես այլընտրանք՝ ԽՍՀՄ կողմից օկուպացիայի դադարեցման արդյունքում: Ընդ որում, Արցախի ժողովուրդն իր ինքնորոշման իրավունքի իրականացումը սկսել է դեռ 1988 թվականի փետրվարին և պաշտոնապես հոչակել է

<sup>7</sup> Frontier Dispute (Burkina Faso/Mali), 1986 I.C.J. Reports 554, p. 565, 19-20.

իր անկախությունը 1991 թվականի սեպտեմբերի 2-ին, այն է՝ ԽՍՀՄ-ից Ադրբեյջանի անկախացմանը զուգահեռ՝ այն ավարտի հասցնելով՝ նույնիսկ մինչ ԽՍՀՄ-ից Ադրբեյջանի անկախացումը (որը տեղի էր ունեցել նույն թվականի օգոստոսի 30-ից հոկտեմբերի 18-ը ընկած ժամանակահատվածում): Ուստի, Արցախի անկախացումը նախորդել է Ադրբեյջանի միջազգային սահմանների հաստատմանը:

Այսպիսով. չկա որևէ հիմք *uti possidetis juris* սկզբունքն Արցախի ինքնորոշման ու անկախացման գործընթացի նկատմամբ կիրառելու համար: Ավելին, նույնիսկ եթե այն տեսականորեն կիրառելի լիներ այս գործընթացում, այդուհանդերձ այս սկզբունքը չի կարող ազդել Արցախի ինքնորոշման ու անկախացման գործընթացի վրա, քանի որ դրանք նախորդել են Ադրբեյջանի միջազգային սահմանների հաստատմանը, ու վերջիններս չեն ներառում Արցախի տարածքը:

### III. ԱԴՐԲԵԶԱՆԻ ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆԸ\*

Ադրբեզանի ազրեսիվ պատերազմի քարոզության վառ օրինակ են Ադրբեզանի ղեկավարության հակահայկական կոչերը: Ստորև ներկայացնում ենք Ադրբեզանի պաշտոնատար անձանց հակահայկական հայտարություններից մի քանիսը, ինչպես նաև միջազգային կառուցների անդրադարձն Ադրբեզանի կողմից հակահայկական քարոզությանը:

#### 1. Ատելության խոսք և ռասիստական քարոզություն Ադրբեզանի պետական իշխանությունների կողմից

Ադրբեզանի բարձր քաղաքական ղեկավարության կողմից հայերի և Հայաստանի Հանրապետության դեմ էթնիկ ատելություն հրահրող հայտարարությունները խախտում են Ռասայական խտրականության բոլոր ծների վերացման մասին Կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 2-րդ հոդվածով սահմանված բոլոր պողիտիվ պարտավորությունները:

Ժամանակակից միջազգային իրավունքում ատելության խոսքն արգելված է մի շարք միջազգային փաստաթղթերով: Այսպես, համաձայն Մարդու Իրավունքների Համընդիանուր Հոչակագրի 7-րդ հոդվածի՝ «բոլոր մարդիկ սույն Հոչակագրով հասկադրված հավասարությունը խախորո որևէ խպրականությունից, սադրանքից պաշտպանվելու հավասար իրավունք ունեն»: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 20-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «ազգային, ռասայական կամ կրոնական ավելության օգդին որևէ ելույթ, որն իրենից ներկայացնում է խպրականության, թշնամանքի կամ բռնության սադրանք, պեղը է արգելվի օրենքով»: Եվ իհարկե Ռասայական խտրականության բոլոր ծների վերացման մասին Կոնվենցիան անդրադառնում է խտրականության հրահրման հարցին (նախարան և հոդված 4):

Չնայած այս փաստին, Ադրբեզանի իշխանությունների հայտարարությունները մշտապես լի են եղել հակահայկական քարոզությամբ և ատելությամբ, սկսած պետական հիերարխիայի ամենաբարձր աստիճաններից:

Ադրբեզանի նախագահն իր ելույթներում և հայտարարություններում շարունակ ատելություն և թշնամանք է հրահրել Հայաստանի և հայերի նկատմամբ:

Ադրբեզանի նախագահ Իլհամ Ալիևի հայտարարությունը՝ «Մենք թույլ չենք տա, որ Հայաստանը զբաղվի բանակցությունների իմիդացիայով: Մենք բանակցություններ

\* Սույն գլխի նախապատրաստման համար հիմք են ընդունվել "Армянофобия в Азербайджане" (А. Адигекян, А. Элибегова Ереван, 2013) գրքում և "Насаждение армянофобии в Азербайджане как нарушение международных норм на примере официальных высказываний президента Ильхама Алиева" (Анжела Элибегова) հոդվածում հրապարակված տեղեկատվությունները, փաստերը և նկարագրությունները: [Էնկուրունային աղյուր] <http://www.stopatespeech.net/index.html> , <https://www.academia.edu/12861161>

վարելու ենք, քանի դեռ ունենք այս կերպ երկրի գարածքային ամբողջականության վերականգնման հույս: Եթե մենք դեսնենք, որ դա հնարավոր չէ, ապա ադրբեջանական պետությունը կվերականգնի իր գարածքային ամբողջականությունը՝ օգտագործելով ռազմական գարբերակը<sup>8</sup>:

Քանի որ մինչ օրս շարունակվում են Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման հիմնախնդրի շուրջ բանակցությունները, և չեն գտնում հարցի լուծում հօգուտ Ադրբեջանի, երկրի նախագահը հաճախ դիմում է ագրեսիայի սպառնալիքի: Մեկ օրինակ Իլհամ Ալիևի հայտնի հայտարարություններից, համաձայն որի ադրբեջանցիների հիմնական թշնամին «ամբողջ աշխարհի հայերն են և իր ազդեցության դակ գտնվող երեսպաշտ, կոռուպցիայի և կաշառակերության մեջ թաղված քաղաքական գործիչները»<sup>9</sup>:

Ադրբեջանի պաշտոնատար անձանց հայտարարությունները հակասում են ոչ միայն միջազգային, այլ նաև երկրի ազգային օրենսդրությանը, համաձայն որի կարելի է դրանք որակել որպես «ցեղասպանության իրականացման իրահրում» (Ադրբեջանի քրեական օրենսգրքի 104-րդ հոդված) և «ագրեսիվ պատերազմի հրապարակային կոչեր» (Ադրբեջանի քրեական օրենսգրքի 101-րդ հոդված)<sup>10</sup>:

ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի «Ադրբեջանի կողմից հակահայկական քարոզությունը և ատելության սերմանումը որպես լուրջ խոչընդոտ բանակցային գործընթացում» հատուկ գեկուցում նշված է. «Ադրբեջանի բարձրաստիճան պաշտոնակար անձանց՝ հայերի և Հայաստանի Հանրապետության նկարմամբ ավելության հայդարարությունները խախում են Կոնվենցիայի 2-րդ հոդվածով սահմանված բոլոր պազիվիկ պարտականությունները, մասնավորապես՝ «դակապարտել ռասայական խորականությունը», «ձգբել բոլոր անհրաժեշտ միջոցներով նպաստել բոլոր ռասաների միջև փոխըմբռնմանը»<sup>11</sup>:

ՄԱԿ-ի Ռասայական խորականության վերացման կոմիտեի նիստի ժամանակ (03.15.2005թ.) մտահոգություն է հայտնվել Ադրբեջանում հալածանքների ենթարկվող և իրենց ազգային ինքնությունը թաքցնող հայերի ճակատագրի վերաբերյալ, քանի որ 1999 թվականի մարդահամարի ժամանակ Ադրբեջանական Հանրապետության կողմից վերահսկվող տարածքում, ընդամենը 650 մարդ է ընդունել, որ հայ Է<sup>12</sup>: Կոմիտեն առաջարկել է Ադրբեջանին ուսումնասիրություններ կատարել՝ ռասայական

<sup>8</sup> Речь Ильхама Алиева на церемонии прощания с Национальным Героем Мубаризом Ибрагимовым и старшим лейтенантом Фаридом Ахмедовым. 07.11.2010. [Էլեկտրոնային աղյուր] <http://ru.president.az/articles/1013>

<sup>9</sup> Заключительная речь Ильхама Алиева на конференции, посвященной итогам третьего года реализации «Государственной программы социально-экономического развития регионов Азербайджанской Республики в 2009-2013 годах». 28.02.2012. [Էլեկտրոնային աղյուր] <http://ru.president.az/articles/4423>

<sup>10</sup> Уголовный кодекс Азербайджанской Республики. 31.01.2005. [Էլեկտրոնային աղյուր] <http://www.legislationline.org/ru/documents/id/14841>

<sup>11</sup> Anti-Armenian propaganda and hate dissemination carried out by Azerbaijan as a serious obstacle to the negotiation process. HDIM.DEL/382/08.

<sup>12</sup> Summary Record of the 1691st Meeting: Azerbaijan; Summary Record of the 1691 Meeting, CERD/C/SR.1691, 15 Mar. 2005. [Էլեկտրոնային աղյուր] [http://www.unhchr.ch/tbs/doc.nsf/\(Symbol\)/f15c8321b94c4040c1256fc7005423be?OpenDocument](http://www.unhchr.ch/tbs/doc.nsf/(Symbol)/f15c8321b94c4040c1256fc7005423be?OpenDocument)

խտրականության դեպքերը, մասնավորապես՝ հայերի նկատմամբ<sup>13</sup>, վերլուծելու և արդյունավետ գնահատելու նպատակով, ինչը չի կատարվել:

Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ Եվրոպական հանձնաժողովը (ECRI), 2011թ. իր հաշվետվությունում՝ ուսումնասիրելով Ադրբեջանում ապրող հայերի խնդիրները, նշում է, որ երկրում կան ազգությամբ հայեր, ովքեր՝ որպես Ադրբեջանի քաղաքացիներ, ի վիճակի չեն իրականացնել իրենց իրավունքները, մասնավորապես՝ զրկված են սոցիալական պաշտպանությունից<sup>14</sup>:

2007թ. մարտի 10-ի ադրբեջանական և թուրքական սփյուռքի կազմակերպությունների ղեկավարների առաջին համաշխարհային ֆորումի բացման ժամանակ Ի. Ալիևն իր ելույթում ասում է. «Նպաստակ ունենալով դուրս մղել ադրբեջանցիներին իրենց պարմական հողերից, այդ դարածքներում առասպելական «Մեծ Հայաստան» սկեղծելու համար հայերը դասնամյակներ շարունակ ադրբեջանական և թուրքական ազգերին պարբերաբար ենթարկում են գաղափարական, ուզմական և մշակութային ազրեսիայի...: 1918թ. ադրբեջանական հողերի վրա սկեղծվել է հայկական պետությունը, որին զիջել են որպես մայրաքաղաք՝ Իրևանը՝ Ադրբեջանի կարևորագույն մշակութային կենտրոններից մեկը»<sup>15</sup>:

Այս գաղափարը սիսալմունք չէ, այլ շատ լավ մտածված հակահայկական քարոզության բաղադրիչ, ինչի մասին վկայում է Իլհամ Ալիևի պաշտոնական ելույթներում այս թեզի հաճախակի կրկնությունը:

2014թ. հունիսի 7-ի իր պաշտոնական ելույթի ժամանակ Ալիևը նշել է՝ «Նախիջևան՝ Ադրբեջանի հին երկիր: Նախիջևանի պարմական հուշարձանները, կրոնական հուշարձանները, ճարտարապետական հուշարձանները, բոլոր գեղանունները պարկանում են ադրբեջանական ժողովրդին: Ադրբեջանական ժողովրդը դարեր շարունակ ապրել և աշխապել է այս գեղեցիկ երկրում... անարդարություն է թույլ դրվել մեր ժողովրդի նկարմամբ, քանի որ Զանգեզուրը, հին ադրբեջանական երկիրը, անջարվել է Ադրբեջանից և դրվել Հայաստանին: Դա մի մեծ անարդարություն էր, քանի որ Զանգեզուրը՝ պարմական, ադրբեջանական հայրենի երկիր է... անկախության դարիներին՝ 1918թ-ին, Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության որոշմամբ Իրևանը՝ մեր պարմական երկիրը, հանձնվեց Հայաստանին: Ճիշտ այնպես, ինչպես մի քանի դարի անց բոլշևիկյան խորհրդային իշխանությունը հայերին հանձնեց Զանգեզուրը»:<sup>16</sup>

Մեկ այլ ուշագրավ մեջբերում Ալիևի 2014 թվականի հունիսի 24-ի ելույթից՝ «Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի պարմական մասն է: Լեռնային Ղարաբաղում

<sup>13</sup> Concluding Observation of the CERD: Azerbaijan, 14 April 2005 (CERD/C/AZE/CO/4). [Էլեկտրոնային աղյուր] [http://www.unhchr.ch/tbs/doc.nsf/\(Symbol\)/a5613020715aaaf0cc125700e004b878a?OpenDocument](http://www.unhchr.ch/tbs/doc.nsf/(Symbol)/a5613020715aaaf0cc125700e004b878a?OpenDocument)

<sup>14</sup> ECRI обеспокоена судьбой этнических армян, живущих в Азербайджане. 01.06.2011. Xenophobia prevention initiative. [Էլեկտրոնային աղյուր] <http://stopxenophobia.org/?p=2366>

<sup>15</sup> Речь президента Азербайджана И.Алиева на открытии I Всемирного форума руководителей азербайджанской и турецкой диаспорских организаций. 10 марта 2007 г.

<sup>16</sup> Речь Ильхама Алиева на торжественной церемонии, посвященной 90-летнему юбилею Нахичеванской Автономной Республики. 08.04.2014. [Էլեկտրոնային աղյուր] <http://ru.president.az/articles/11477>

ադրբեջանցիները բնակվել են դարեր շարունակ: Իսկ հայերը ապրում են այդ վայրերում երկու հարյուր տարուց էլ քիչ... Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության առաջին հրամանագրերից մեկը վերաբերում էր որպես մայրաքաղաք Իրևանը Հայոց պետությանը փոխանցելուն»:<sup>17</sup>

Եվս մեկ անգամ Հայաստանի մայրաքաղաքի վերաբերյալ Ալիևը 2014թ. հուլիսի 7-ին նշել է՝ «Հանրության լայն շրջանակներում հայրենի չէր 1918 թվականին Իրևանի՝ Հայաստանին փոխանցման փասդը: Երբ ես առաջին անգամ բարձրացրեցի այս հարցը, ոմանց դա մի նոր բան թվաց: Բայց դա իրականություն է, այս պահին Ադրբեջանում դա գիտեն բոլորը, և հնարավորության դեպքում մենք պետք է միշտ նշենք այն միջազգային գիտաժողովներին, համաժողովներին, միջոցառումներին»:<sup>18</sup>

Ադրբեջանական «Pia.az» կայքը հոդված է իրապարակել «Ամոթայի փասդ կրթական համակարգում» վերնագրով, առ այն, որ Բաքվի Բինագադիի շրջանի թիվ 246 դպրոցի տնօրենը՝ Էլզա Թագիևը, հայ է մոր կողմից: Հոդվածում նշվում է, որ Ադրբեջանի կրթության և գիտության նախարար Միսիր Մարդանովը «Ադրբեջանի մարդադասընթացում գիտական գործությունը վարչական է թուրքերի թշնամիներին»: Հոդվածի հեղինակը հարց է բարձրացնում. «Ինչպես կարելի է վստահել մեր ապագան հանդիսացող երեխաների կրթության և հայրենասիրական դաստիարակության գործընթացը խառնածին հայի»:<sup>19</sup>

Եվրոպայի Խորհրդում Ադրբեջանի դեսպանը խորհուրդ է տալիս հայերին հանգիստ չքնել, քանի դեռ դարաբաշխ հակամարտությունը չի լուծվել: «Մինչև Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումն անհնար է բացառել Բուդապեշտի միջադեպի կրկնության հնարավորությունը (խոսքը Բուդապեշտում քնած հայ սպայի սպանության մասին է)»:<sup>20</sup>

Ադրբեջանի նախկին նախագահ Հեյդար Ալիևը իր ելույթներից մեկում նշել է. «Եվ հերազարդում անհրաժեշտ է սպեղծել այնպիսի գործեր, որ դրանք հաջորդական ձևով մշտապես ապացուցեն Ադրբեջանին այն հողերի պատկանելությունը, որուն այժմ Հայաստանն է գրնվում: Մենք պետք է դա անենք: Մենք պետք է ճանապարհ հարթենք ապագա սերնդի համար»:<sup>21</sup>

Ամերիկյան «Global Post» առցանց թերթը նշում է, որ Ադրբեջանի նախագահ Իլիամ Ալիևը ոչ միայն չի սիրում Հայաստանը, այլ նաև չի վախենում խոսել, ինչպես նաև գրել դրա մասին Twitter-ում: Twitter-ում նախագահ Իլիամ Ալիևի հետևողները

<sup>17</sup> Выступление Ильхама Алиева на сессии Парламентской ассамблеи Совета Европы (PACE). 24.06.2014. [Էլեկտրոնային աղյուր] <http://ru.president.az/articles/12149>

<sup>18</sup> Речь Ильхама Алиева на пятом совещании руководителей органов дипломатической службы Азербайджанской Республики в Министерстве иностранных дел. 07.07.2014. [Էլեկտրոնային աղյուր] <http://ru.president.az/articles/12392>

<sup>19</sup> Tshsil sahssinds biabirgi fakt. Pia.az. 24.04.11. [Էլեկտրոնային աղյուր] <http://pia.az/index.php?l=az&m=news&id=9108> (az)/ Сохраненная копия: <http://www.reeep.us/82af0323>

<sup>20</sup> Посол Азербайджана в СЕ не советует армянам спать спокойно, пока карабахский конфликт не решен. ИА REGNUM. 20.02.2004. [Էլեկտրոնային աղյուր] <http://regnum.ru/news/221381.html>

<sup>21</sup> «Бакинский рабочий» 11 февраля 1999 года.

ստացել են ավելի քան 30 գրառում հարևան երկրի մասին, որոնք հաստատապես դիվանագիտական չեն և, ըստ էության, դրանք կարելի է համարել վիրավորական:<sup>22</sup> Հղումները «Հայ բարբարոսներին», «Հայ վանդալներին» և «Հայ ֆաշիստներին» Արդեօքանի նախագահի գրեթե յուրաքանչյուր ելույթի մշտական առանձնահատկությունն են անկախ միջոցառման բնույթից: Մի քանի նման հայտարարությունների օրինակներ ներկայացված են ստորև:

2012 թվականի դեկտեմբերի 27-ին Մուշիգաբաթում 1440 ներքին տեղափոխված անձանց ընտանիքների համար նոր մասնաշենքի բացման ժամանակ Իլիամ Ալիևն ասել է.

«Ինչպես գիտեք օկուպացված հողերի վրա ամեն ինչ ոչնչացվել է: Մեր բոլոր պարմական հուշարձանները ոչնչացվել են **հայ ավազակների և վանդալների** կողմից: Դպրոցի մարզասրահում դեղադրված ցուցանմուշները մեր պարմական ժառանգությունն են: Բայց մեր նյութական ժառանգությունը կազմող իրերի մեծ մասը, որոնք պահպել են թանգարաններում, **կողոպտվել, քանդվել ու այրվել են հայերի կողմից:** Մեր մզկիթները և գերեզմանները ավերակ են դարձել: Սա **արվել է հայերի և հայ ֆաշիստների կողմից**»:

2012 թվականի դեկտեմբերի 15-ին, Ֆիզովի ՀԵԿ-ի բացման ժամանակ իր ելույթի ընթացքում Ալիևն ասել է.

«Առաջիկա դարիներում լրացուցիչ միջոցներ կձեռնարկվեն ֆիզովի շրջանի զարգացման համար: Կա նաև հայ բարբարոսների կողմից ավերված դների վերականգնման խնդիրը: Այս հարցը բարձրացվել է այսօր և կսկանա իր լուծումը: Լրացուցիչ միջոցներ կձեռնարկվեն շրջանի սոցիալ-դնդեսական զարգացումն արագացնելու համար: Մենք կվերականգնենք մեր պարմական և կրոնական դարածքները, կվերացնենք հայ ֆաշիստների և վանդալների կողմից կարարած հանցագործությունների հեղևանքները»:

2012 թվականի հոկտեմբերի 10-ին Նախարարների Կաբինետում իր փակման ելույթի ընթացքում Ալիևը նշել է. «մեր յուրաքանչյուր հաղթանակը դժբախտություն է Հայաստանի համար»:

2012 թվականի սեպտեմբերի 21-ին դիվանագիտական ծառայության դեկավարների չորրորդ հանդիպման ժամանակ Ալիևը հայտարել է.

«Մենք հանդիպել ենք մի շարք ճնշումների, երբ ցանկանում էինք իրականացնել Բաքու-Մբիլիսի-Կարս երկաթուղային նախագիծը: Այնքան շատ ճնշում է գործադրվել դարածաշրջանի երկրների կողմից: Դուք չեք կարող դա անել, եթե անեք դա, ապա Հայաստանը կոչնչանա: Հայաստանի շրջափակման և մեկուսացման հարցը կլինի լիովին ապահովված: Բայց անկախ ամեն ինչից, մենք արեցինք դա»:

<sup>22</sup> Azerbaijan's president launches Twitter rant against Armenia. Global News Blog. 20.11.2012. [Էլեկտրոնային աղյուր] [http://globalpost.com/dispatches/globalpost-blogs/weird-wide-web/azerbaijan-president-ilham-aliyev-twitter-rant-armenia\\_\(en\)](http://globalpost.com/dispatches/globalpost-blogs/weird-wide-web/azerbaijan-president-ilham-aliyev-twitter-rant-armenia_(en))

2012 թվականի փետրվարի 28-ին «Շրջանների սոցիալ-տնտեսական զարգացման պետական ծրագիր 2009-2013 թվականների համար» ծրագրի երրորդ տարվա արդյունքներն ամփոփող կոնֆերանսի ժամանակ իր փակման խոսքի ընթացքում Ալիևը հստակ նշել է.

**«Մեր հիմնական թշնամիներն ամբողջ աշխարհի հայերն են և նրանց վերահսկողության դակ գրնվող կեղծավոր և կոռումպացված քաղաքական գործիչները»:**

Որպես հայատյաց հայտարարությունների ավելի քողարկված տարբերակ՝ կարելի է նշել բազմաթիվ դեպքեր, երբ ադրբեջանական բարձրաստիճան պաշտոնյաները, կեղծ տեղեկություններ ներկայացնելով, փորձում են մերժել հայերի՝ Արցախի ու Հայաստանի տարածքներում պատմականորեն բնակվելու ու սեփական մշակույթի ու պատմության առկայությունը։ Նման հայտարարություններն ակնհայտորեն չեն համապատասխանում Ադրբեջանի պարտավորությանը չպաշտպանել ոչինչ, ինչը նպաստում է ռասայական բաժանման խորացմանը։

Առավել մտահոգիչ է, որ հայերի ու հայկական մշակույթի պատմական գոյության հերքումները բազմիցս տեղ են գտնում նաև Ադրբեջանում օգտագործվող դպրոցական ու նախադպրոցական գրականությունում<sup>23</sup>:

Ստորև ներկայացվում է հատվածներ «Նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների հայրենասիրական դաստիարակության մեթոդական ձեռնարկ»-ից և «Երեխաներին հայրենասիրական ոգով դաստիարակելու մեթոդական ձեռնարկ»-ից:<sup>24</sup>

**«Մշակողներ՝ Ֆ.Կոչառիի անվ. հանրապետական մանկական գրադարանի գիրամեթոդական բաժին և Ս.Վուրգունի անվ. Կենդրոնական գրադարանի մեթոդական բաժին։**

**Հասկարված է՝ Ադրբեջանական Հանրապետության մշակույթի և գրուաշրջության նախարարության կողմից, Բաքու 2009 թվական։**

**Բացարձրություն։ Ձեռնարկը ներառում է սցենարներ և առաջարկում է բառեր ու արդահայրություններ վարողների համար։ «Մեթոդական ձեռնարկ»-ը նախադեսված է երեխաների համար՝ սկսած 3 տարեկանից։**

**Առաջին վարող։**

<sup>23</sup> Методическое пособие по воспитанию детей в патриотическом духе. Министерство культуры и туризма Азербайджана. Баку. 2009. [Էլեկտրոնային աղյուր PDF] <http://clb.az/files/mv/vetenpver1.pdf> (az); <http://azerichild.info/books-education-azerbaijan-hatred-from-childhood-2.html>. Алисашиб Эрогул «Хале» сборник рассказов. Учебное пособие для внеklassного чтения учащихся средних школ. Баку. «Текнур», 2011 г. 608 с. [ Էլեկտրոնային աղյուր] <http://azerichild.info/HALE.pdf> (az); <http://azerichild.info/HALE.pdf>. Азербайджанские учебники продолжают парадное шествие. Azerichild. info.

[Էլեկտրոնային աղյուր] [http://azerichild.info/books\\_01.html](http://azerichild.info/books_01.html). Ягуб Махмудов, Юсиф Юсифов, Рагим Алиев. История Азербайджана. Учебник для 7 класса. - Баку: «Маариф», 1997, с.19, прим.1 и с.24.

<sup>24</sup> Методическое пособие по воспитанию детей в патриотическом духе. Министерство культуры и туризма Азербайджана. Баку. 2009. [Էլեկտրոնային աղյուր PDF] <http://clb.az/files/mv/vetenpver1.pdf> (az); <http://azerichild.info/books-education-azerbaijan-hatred-from-childhood-2.html>

- Մեր նախնիները մեր հողերը պահպանել են թշնամուց ոչ թե նրա համար, որ հիմա մենք այն զոհենք դարի աղեփներին՝ հայությանը։ Նահապակների Ծառուղում թուրքական որդիների գերեզմանաքարերը նրա համար չեն շարվել մի շարքով, որ հիմա ինչ-որ ոռուս զինվոր ասի, «այդպես մի դանջվեք, ձեր ղեկավարները վաղուց արդեն վաճառել են Ղարաբաղը»։

**Երկրորդ վարող.**

- Եթե Հայրենիքը դառնա նահապակ, ինչ պատասխան պիտի դանք հրապարակում իր մոր գրկում «Ավելի լավ է մահ, քան նահանջ» գոռացող երեխային։

Ո՞չ, թուրքի որդի, ո՞չ։ Դու թույլ չես դա, որ քո հողը դառնա նահապակ։

Եկե՛ք բոլորս երդվենք, ում երակներում թուրքական արյուն է հոսում, երդվենք, որ, եթե նոյնիսկ աշխարհը շուր գա, թշնամու ձեռքերը մեր հողից կկպրենք։ Երդվենք, որ մեր նահապակների՝ հողի վրա արցունք դարձած յուրաքանչյուր արյան կաթիլի համար, մենք պետք է վրեժինդիր լինենք։ Եվ երդվենք, որ այս մեր երդումը նման չի լինի մեր բոլոր մյուս երդումներին։ Երդվե՛նք»։

Որպես այս նյութի տրամաբանական շարունակություն՝ երեխաներին հայրենասիրության ոգով դաստիարակելու և նրանց քաղաքացիական վարքագիծը ձևավորելու համար խորհուրդ է տրվում բանավեճեր կազմակերպել։

Բանավեճի հարցերը պետք է լինեն։

«-Ո՞վքեր են հայերը, և ո՞րն է մեր քաղաքացիական պարտը։

-Ի՞նչ է նշանակում լավ մարդ։

-Ե՞րբ է դեղի ունեցել Խոջալուի ողբերգությունը։

Միջին դասարանում սովորողների համար «Հալե<sup>25</sup>» պատմվածքների գրքի նախաբան։

«Երիտասարդ ընկեր։

Հին ու հզոր թուրք ազգի աղերբեջանցի՝ երեխա, քո գանձի մի կտորը, որի անվանումն է Աղրբեջան, սկսված Ազբարա շրջանից մինչև Աղդամի շրջան՝ քեզ հավիտենական և պատմական թշնամի հայուրարած, ապագա չունեցող, բարոյականությունից զուրկ մի ազգի կրնկի դակ է, որի երակներով կեղպաջուր է հոսում է, մի չարակամ և արհամարհելի ազգ։

Դու դեմառդեմ կիանդիպես այնպիսի արելի թշնամու, որ չի նողկում ոչ մի դեսակի վայրագությունից, անպատվությունից, պղծությունից, բարբարոսությունից, կեղծավորությանից, զրպարդությունից և չարից, ապրում և փայփայում է երազանք սղեղծել «Հզոր Հայասպան» պետություն, որը ձգվում է Սև ծովից մինչև Կասպից ծովը, մի դարածքի վրա, որպես չի ունեցել ոչ մի թիգ պարմական հող։

Այս ուղու վրա նա թափում էր թուրքի արյունը և հագենում դրանով։

<sup>25</sup> Алисаҳиб Эрօғул «Хале» сборник рассказов. Учебное пособие для внеклассного чтения учащихся средних школ. Баку. «Текнур», 2011 г. 608 с. [Էլեկտրոնային առյուղ] <http://azerichild.info/HAL.E.pdf> (az); <http://azerichild.info/HAL.E.pdf>

Ժամանակ առ ժամանակ նա ցուց էր դալիս իրեն, որպես ընկեր և վարահություն ձեռք բերելով՝ ցուցաբերում էր կարաղի թշնամանք: Դեմքին ժագալով՝ նա մեզ փոս էր փորում՝ ընդունուելով դավաճանության և մարդության ուղին:

Միշտ օգտվելով մեր բարությունից, ընկերությունից, հարևանների նկատմամբ հավաքարմությունից և մեծահոգությունից, մի խոսքով մեր մարդասիրությունից՝ նա այդ գենքը մեր դեմ էր հանում, պարասիանում էր բարուն չարով՝ ցուցադրելով իր սպոր բնույթը: Առաջին իսկ հնարավորության դեպքում նրանք, մերկացնելով դաշույնը, դանակահարում էին մեջքից նրանց, ովքեր ապաստանում, կերակրում, հովանավորում, օգնության ձեռք էին մեկնում:

Հայերը դարձել են մեզ քաղաքականության էթնիկական զրումների անմեղ զոհ: Մենք դարձել ենք ցեղասպանության զոհ:

Այս անզուսաց ժողովուրդը, որի երակներով հոսում է սարանայի արյուն, մեր դեմ կաղարել է անթիվ ահաբեկչական գործողություններ:

Նրանք, շարժելով իրենց պոչը Ռուսական կայսրության առջև, որը միշտ պահել է մեզ օկուպացված, հենվում էին նրանց իշխանության և հովանավորության վրա: Եվ, որպես կանոն, նրանք կարողանում էին մեզ մեկուսացնել, թողնել մենության մեջ: Ռուսական կայսրությունը 200 դարվա ընթացքում, պահելով մեր ձեռքերը կապված, հայերին ասել է՝ հարվածիր նրանց:

Հայերը լիարժեք օգտվել են դրանից՝ դարձնելով դավաճանությունն ազգային գիծ և անցնելով լկրիության բոլոր սահմանները:

Ամեն քայլափոխի, ենթարկելով մեզ ագրեսիայի, նրանք մաս-մաս գրավում էին մեր սուլր հողերը: Իսկ նախկին մայր հայրենիքը՝ Իրևանը, ընդունեցին իրենց մայրաքաղաք»:<sup>26</sup>

Պատմությունը խեղաթյուրելու միջոցով անուղղակի կամ ուղղակի հայատյացություն սերմանելու դրվագներ կարող ենք գտնել նաև ադրբեջանական դասագրքերում:

Ադրբեջանի պատմության 7-րդ դասարանի դասագրքում մշտապես խոսվում է այն մասին, որ իին Աղվանքը (որն, ըստ ենթատեքստի, նշանակում է իին Ադրբեջան) նույնպես ենթարկվել է հայկական ագրեսիայի, չնայած այն հանգամանքին, որ «Ալբանիայի բնակչությունը և դեկավարները դժվար ժամանակ օգնության ձեռք են մեկնել հայերին»: Միևնույն ժամանակ, հայերը տարածել են քրիստոնեություն Աղվանքում, որն այնտեղ «չուներ արմատներ» և իբր քրիստոնեության ներքո գրավել են «ադրբեջանական հողերը» Բյուզանդական հովանավորությամբ: Սակայն, Աղվանքը չի դարձել քրիստոնեական երկիր», 7-րդ դարից ընդունել է իսլամը, իսկ հայերի և իրենց քրիստոնյա հովանավորների դեմ պայքարը հենց թուրք ազգն է տանում:<sup>26</sup>

<sup>26</sup> Յագբ Մահմուդօվ, Յոսիֆ Յոսիֆօվ, Ռագիմ Ալիև. Իստորիա Ազերբայջանա. Ստուգա դպրոցական հանդիսավորություն. - Բակու: «Մաարիֆ», 1997, ս.19, պատճեն և ս.24.

Ավելի ուշագրավ և անհանգստացնող են հայերին սպանող անհատներին գովաբանելու դեպքերը, անկախ այն հանգամանքից՝ դա արվել է ռազմի դաշտում, թե՝ խաղաղ պայմաններում:

Այսպիսով, երբ 2010 թվականի հունիսի 18-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Ադրբեյջանի միջև հրադադարը ևս մեկ անգամ խախտվել է վերջինիս կողմից, ադրբեյջանական զինվորների կողմից դիվերսանտ արշավանքը, որը հանգեցրել է մի շարք հայ և ադրբեյջանցի զինվորների մահվան, Ադրբեյջանում դիտվել է որպես հերոսություն: Մի քանի հայ զինվորների սպանած ադրբեյջանցի զինվորի՝ Մուրարիզ Իբրահիմովի հուղարկավորության արարողության ժամանակ իր խոսքում հլիամ Ալիկը հայտարարել է.

«Սպանելով թշնամի հինգ զինվոր և վիրավորելով նրանցից երեքին անհավասար մարդում, Մուրարիզ Իբրահիմովը նահարակվեց... Գերագույն Գլխավոր Հրամանագարի հրամանին սպասող հազարավոր և դասնյակ հազարավոր Մուրարիզի նման հերոսներ կան մեր բանակում»:

Ավելի ապշեցուցիչ է, երբ Ռամիլ Սաֆարովը դաժանաբար սպանեց հայ պաշտոնյա Գուրգեն Մարգարյանին քնած ժամանակ 2004 թվականի փետրվարի 19-ի գիշերը Բուդապեշտում, որտեղ երկուսն էլ մասնակցում էին ՆԱՏՕ-ի անգերեն լեզվի սեմինարին, Ադրբեյջանի պետական մարմինները փառաբանեցին մարդասպանի արարքը:

Օրինակ, Ադրբեյջանի այդ ժամանակ Մարդու Իրավունքների Պաշտպան Էլմիրա Սուլեյմանովան ասել է. «Սաֆարովը պետք է դառնա հայրենասիրության օրինակ ադրբեյջանցի երիտասարդների համար», իսկ Ազշին Մեհրիմար, այն ժամանակ Ադրբեյջանի մշտական ներկայացուցիչը Եվրոպայի Խորհրդում և ներկայիս մշտական ներկայացուցիչը Միացյալ Ազգերի Կազմակերպությունում նշել է, որ ինքը խորհրդու չի տալիս հայերին հանգիստ քնել, քանի դեռ դարաբաղյան հակամարտությունը կարգավորված չէ, և, որ մինչ այդ Բուդապեշտի միջադեպին նման միջադեպերը չեն կարող բացառվել<sup>27</sup>:

Նման հայտարարություններ արվում են ոչ միայն հայերի դեմ, այլ նաև Հայաստանի Հանրապետության դեմ: Օրինակ՝ 2006 թվականին Ադրբեյջանի Միլի Միջլիսի (խորհրդարանի) փոխխոսնակ Խավա Մամեդովան զեկուցել է՝ ասելով, որ «ժամանակն է սրբել Հայաստանը՝ որպես պետություն, Երկրի երեսից»:

Բարձրաստիճան հանրային իշխանությունների կողմից արվող և հայերի ու Հայաստանի դեմ ուղղված խտրականություն պարունակող ծայրահեղ հայտարարություններն Ադրբեյջանի ամենօրյա հանրային կյանքի անբաժանելի մասն են դարձել: Նման հայտարարություններն արվում են անկախ միջոցառման բնույթից, միջավայրից, լինի դա գործարանի բացում, նոր շինության կառուցում, նոր հուշարձանի

<sup>27</sup> Посол Азербайджана в СЕ не советует армянам спать спокойно, пока карабахский конфликт не решен. ИА REGNUM. 20.02.2004. [Էլեկտրոնային աղյուր] <http://regnum.ru/news/221381.html>

կանգնեցում, հաղթանակ սպորտային մրցաշարում և այլն, հակահայկական ատելության խոսքն Ադրբեջանի իշխանությունների ելույթների անբաժանելի և արմատական մասն է դարձել:

Քաղաքական ամենաբարձր մակարդակի վրա արվող նման հայտարարությունները թշնամություն և ատելության մթնոլորտ ստեղծելու և հաստատելու վրա մեծ ազդեցություն են ունենում: Հատկապես մի երկրում, որտեղ մամուլն ու համացանցը լայնորեն վերահսկվում են կառավարության կողմից, նախագահի և այլ բարձրաստիճան պաշտոնյաների կողմից արված հակահայկական հայտարարություններն ու ատելության խոսքը նշանակալի ազդեցություն են ունենում և անխուսափելիորեն ծևավորում են երկրում բացասական մթնոլորտ:

Այս ամենը հակասում է Կոնվենցիայով սահմանված պետության պարտավորություններին: Մասնավորապես՝ Ադրբեջանի իշխանությունների վերը նշված հայտարարություններն ու գործողությունները հստակ կերպով խախտում են Կոնվենցիայի 4-րդ հոդվածը, համաձայն որի «Մասնակից պետությունները դադապարպում են ցանկացած քարոզություն ... որոնք փորձում են արդարացնել կամ իրախուսել ուսայական ավելությունն ու խպրականությունը, ինչ ձևով էլ որ դրանք դրսևորվելիս լինեն. նրանք պարփակություն են ձեռնարկել անհապաղ ու դրական միջոցներ՝ ուղղված նման խպրականության ցանկացած իրահրում կամ իրականացում վերացնելուն»: Դրանք նաև խախտում են 4-րդ հոդվածի (գ) մասում սահմանված հատուկ կանոնը, որը նախատեսում է, որ Կոնվենցիային մասնակից պետությունները «պետական իշխանության ազգային կամ գեղական մարմիններին կամ պետական հասկապություններին չեն թույլադրում իրախուսել կամ իրահրել ուսայական խպրականություն»:

Ադրբեջանի բարձր քաղաքական ղեկավարության կողմից հայերի և Հայաստանի Հանրապետության դեմ էթնիկ ատելություն հրահրող հայտարարությունները խախտում են Կոնվենցիայի 2-րդ հոդվածով սահմանված պողիտիվ պարտավորությունները. մասնավորապես՝ ընդհանուր պարտավորությունը՝ «դատապարտել ուսայական խտրականությունը», ընդհանուր պարտավորությունը՝ «անհապաղ, բոլոր հնարավոր եղանակներով վարել բոլոր ուսաների միջև փոխազդությունը նպաստող քաղաքականություն», ինչպես նաև նոյն հոդվածի (ա) մասում սահմանված հատուկ պարտավորությունը՝ ապահովել, որ «պետական բոլոր մարմիններն ու հաստատությունները, ինչպես ազգային, այնպես էլ տեղական, կգործեն այդ պարտավորությանը համապատասխան»:

## **2. Լրատվամիջոցներում և համացանցում ատելության և թշնամության քարոզություն**

Բացի պետական մարմիններում Ադրբեջանի կողմից հակահայկական քարոզության իրականացումից, ադրբեջանական մամուլը ամբողջությամբ ողողված է

հակահայկական շեշտադրումներով։ Ինքնին հասկանալի է, որ այդ ամենն ուղղորդվում է պետական իշխանության կողմից և հանդիսանում է հակահայկական պետական հետևողական քարոզության պտուղ։ Ադրբեջանի քաղաքական ուժերի կողմից ատելության խոսքի արտահայտումը ուղեկցվում է լրատվամիջոցներում և համացանցում հակահայկական բուռն քարոզությամբ։ Մարդկանց առանձին խմբի նկատմամբ ատելության և թշնամանքի քարոզությունն արգելված է Կոնվենցիայով։ Ստորև նշված են այս դեպքում կիրառելի հստակ դրույթները։

Համաձայն Կոնվենցիայի 4-րդ հոդվածի.

«Մասնակից պերությունները դադապարփում են ցանկացած քարոզություն և բոլոր այն կազմակերպություններին, որոնք հիմնված են մի ռասայի կամ մաշկի որոշակի գույն կամ էթնիկական ծագում ունեցող անձանց խմբի գերազանցության գաղափարների կամ դեսությունների վրա կամ որոնք փորձում են արդարացնել կամ խրախուսել ռասայական ավելությունն ու խղրականությունը, ինչ ձևով էլ որ դրանք դրսևորվելիս լինեն. նրանք պարփակորվում են ձեռնարկել անհապաղ ու դրական միջոցներ՝ ուղղված նման խղրականության ցանկացած հրահրում կամ իրականացում վերացնելուն ...»։

4-րդ հոդվածն ամրագրում է մի կարևոր պարտավորություն դատապարտելու քարոզությունը և այն բոլոր կազմակերպությունները, որոնք հիմնված են մեկ ռասայի կամ խմբի գերազանցության գաղափարի վրա։ Այս հոդվածի կարևոր մասն այն է, որ այն պարտավորեցնում է պետություններին դատապարտել նաև այնպիսի քարոզությունը կամ կազմակերպություններին, որոնք փորձում են արդարացնել կամ նպաստել ռասայական ատելությանը։

4-րդ հոդվածն ամրագրում է երեք տեսակի պարտավորություն։

ա) պատժել ռասիստական գաղափարների տարածումը, ռասայական խտրականության հրահրումը, ռասայական բռնությունը և այլ գործողություններ,

բ) հայտարարել անօրինական ռասիստական կազմակերպություններն ու քարոզությունը,

գ) կանխել պաշտոնատար մարմինների ներգրավումը ռասայական խտրականության մեջ։

7-րդ հոդվածի համաձայն։

«Մասնակից պերությունները պարփակորվում են անհապաղ ու արդյունավել միջոցներ ձեռնարկել. մասնավորապես՝ դասավանդման, կրթության, մշակույթի և դեղեկարգության բնագավառներում ռասայական խղրականության հանգեցնող նախապաշարմունքների դեմ պայքարի, ազգերի և ռասայական կամ էթնիկական խմբերի միջև փոխըմբռնման, հանդուժողականության ու բարեկամության խրախուսման, ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության, Մարդու իրավունքների համընդիանուր հոչակագրի, Ռասայական խղրականության բոլոր ձևերի վերացման մասին Միավորված ազգերի

կազմակերպության հոչակագրի և սույն Կոնվենցիայի նպատակներն ու սկզբունքները հանրամարչելի դարձնելու նպատակով»:

Այսպիսով, Ադրբեջանն ունի Կոնվենցիայից բխող հետևյալ պարտավորությունները՝ արգելել և պատժել տարբեր լրատվական կազմակերպությունների և ՀՀՄ-ների կողմից իրականացվող ռասայական խտրականության ակտերը, և արդյունավետ հաստատել այնպիսի մթնոլորտ, որը համատեղելի է Կոնվենցիայի առարկայի և նպատակների հետ, այսինքն՝ խթանել հանդուրժողականությունը, տարբեր խմբերի միջև փոխըմբռնումը և խաղաղ գոյակցությունը: Ի թիվս այնի, հանդուրժողական մթնոլորտի ստեղծման պարտավորությունը ներառում է քայլեր կրթության և ուսուցման ոլորտում, այսինքն՝ երիտասարդ սերնդին կրթել հանդուրժողականության և մարդասիրության ոգով, ինչպես նաև կանխել տարբեր անհատների և խմբերի կողմից այլ խմբերի դեմ քարոզություն իրականացնելը և այն: Սակայն, ինչպես վկայում են տարբեր օրինակներ, Ադրբեջանը գործնական ոչ մի քայլ չի ձեռնարկել Կոնվենցիայի 4-րդ և 7-րդ հոդվածների համաձայն իր պարտավորությունները կատարելու համար:

Ադրբեջանում ԶՀՄ-ները և համացանցը հիմնականում վերահսկվում են իշխանությունների կողմից և նրա գրաքննության տակ են: Այս փաստը թույլ է տալիս մեզ գալ այն եզրակացության, որ ԶՀՄ-ներում արտահայտվող ատելությունը, թշնամությունը, ռասիզմը և այլատյացությունն իրականացվում են առնվազն համապատասխան մարմինների իմացությամբ և թույլտվությամբ, ինչն ավելին քան բավական է ԶՀՄ-ների արարքները պետությանը վերագրելու համար: Ճնշված մամուլը, քաղաքական բազմակարծության արգելումը հանդիսանում են բոլորովին ոչ ժողովրդավարական արժեքներ պետության համար, ինչը թույլ չի տալիս մարդկանց կառավարության տեսակետների հետ չհամընկնող տեսակետներ ունենալ:

Բացասական մթնոլորտի, հայերի դեմ ռասիզմի և ռասային խտրականության մասին վկայում են ԶՀՄ-ներում առկա բազմաթիվ հայտարարություններն ու ելույթները: Մասնավորապես՝ համացանցը լի է հոդվածներով, հայտարարություններով, պատմություններով, նորություններով և այլ նյութերով, որոնց միակ նպատակը Հայաստանի և ընդհանրապես հայերի նկատմամբ ատելության և թշնամանքի տարածումն է: Դա պահպանում և մեծացնում է հայերի դեմ հասարակության մեջ բացասական մթնոլորտի պահպանումը՝ մշտապես հրահրելով ատելություն նրանց դեմ: Համացանցում հակահայկական ռասայական քարոզության դեպքերն ու օրինակները ամփոփած են ստորև:

Հայերի նկատմամբ ատելություն սերմանող քարոզությունը, մասնավորապես, պետության և անկախ հեռուստատեսության արդյունքն է: Դա իր հետագա զարգացումն է ունենում նաև դպրոցներում: Հայերին անվանելով «սև հազուստով անհավատներ»՝ հինգերորդ դասարանի դասագիրքը ներկայացնում է հայերին որպես այն բոլոր աղետների աղբյուր, որոնք պատահել են ադրբեջանցիների հետ պատմության ընթացքում:

Աղրբեջանում երեխաներին հայերի նկատմամբ ռասիստական ոգով կրթելու այլ օրինակների մասին վկայում են տարբեր դեպքեր: Օրինակ՝ հատուկ կայքէջի գոյությունը, որը նվիրված է բացառապես հայերի դեմ թշնամանքի և ատելության հաստատմանը:

Նշված աղբյուրը պարունակում է պատմություններ, հեքիաթներ, երգեր, դասագրքեր և այլ կրթական նյութեր, որտեղ հայերը ներկայացված են որպես բացասական, չար, կեղտոտ, խորամանկ և վտանգավոր անձինք, ինչը անխուսափելիորեն սերմանում է հիմնարար ատելություն և թշնամանք աղրբեջանցի երեխաների մոտ ամբողջ ժողովրդի դեմ:

Հայերի դեմ ատելությունը ներկայացված է նաև «աֆորիզմների», «ասույթների» մեջ, որոնք ստեղծված են Հայաստանի և հայերի նկատմամբ ատելությունը հաստատելու և խորացնելու նպատակով: Նման աֆորիզմներից մեկը, որպես օրինակ. «Հայաստանը չունի ուժ, այն դրա փոխարեն ունի բռնություն», «Ուխտադրժությունը Հայաստանի ազգային արհեստն է», «Շատ հայեր նույնիսկ պարտասպ են ինքնասպան լինել, որ աշխարհը հավաքա ցեղասպանությանը», «Մեկ անգամ հոչակելով բռնությունը՝ որպես իր մեթոդ, Հայաստանը անխուսափելիորեն պետք է ընդունի սուվոր՝ որպես սկզբունք», «Ամենավրանգավոր հայերը նրանք են, ովքեր աղոթում են ասպծուն» և այլն:

2012 թվականի դեկտեմբերի 18-ին աղրբեջանական լրատվական պորտալ “Kultura.az”-ը հրապարակել է հատված «Կովկասյան օրեր» գրքից, որը հիմնված է հեղինակ Բանինի՝ ֆրանս-աղրբեջանական գրողի ինքնակենսագրության վրա: Հոդվածը վերնագրված է հետևյալ կերպ. «Մեր մանկության սիրելի խաղը «հայերի կուրորածն» էր և մեր ընկեր Թամարի խոշքանգումը»: Հրապարակված մասում նշվում է աղրբեջանցի հասակակիցների կողմից հայ երեխայի՝ Թամարի նկատմամբ ռասիստական, վիրավորական և նվաստացուցիչ վերաբերմունքի մասին: Հենց ինքը՝ հեղինակը, այդ վերաբերմունքը բնորոշում է որպես «ռասիստական»: Ակնհայտ է, որ հոդվածի նպատակը հայերի դեմ ատելություն և թշնամանք տարածելն է, և, մյուս կողմից, ցուց է տալիս ընդհանրապես հայերի դեմ խորապես արմատավորված ատելությունը:

Հայերի դեմ ատելության մեկ այլ արտահայտման մասին վկայում է հոդվածը, որը վերնագրված է հետևյալ կերպ. «Ի դարրերություն Աղրբեջանի, Վրաստանը պետք է ձեռնարկի անհրաժեշտ քայլեր Հայկական վարակի դեմ կարանդին հասպարելու համար»: Հոդվածում հայերը պատկերված են որպես վարակ, և ընթերցողը գգուշացվում է, որ անհրաժեշտ է պայքարել վարակի դեմ, այսինքն՝ հայերի:

[www.vesti.az](http://www.vesti.az) լրատվական պորտալում հրապարակված հարցազրույցում վրացի պատմագիտության պրոֆեսոր Գուրամ Մերհովիան Հայաստանը բնորոշել է որպես «քաղցկեղի ուռուցք», որը պետք է հեռացվի Հարավային Կովկասից:

Նոյն կայքի կողմից հրապարակված նյութի մեկ այլ մասում հեղինակը համեմատում է հայերին շնագայլերի հետ և ընդգծում է «շողոքորթ», «վախկոտ», «նվաստ», «ստոր» հատկանիշները՝ դրանցով պիտակավորելով հայերին:

Մի շարք հոդվածներում հայերի նկատմամբ դրական վերաբերմունքը ծաղրի առարկա է դառնում և ընդգծվում է, որ Ադրբեջանի բոլոր դժբախտությունները, խնդիրները գալիս են հայերից, և այդ բոլոր հրապարակումներն արվում են հայերի դեմ թշնամանք առաջացնելու կամ խորացնելու նպատակով:

day.az-ը հրապարակել է մի հոդված, որտեղ «Yeni Azerbaijan» կուսակցության գործադիր քարտուղարի տեղակալ Սիրավուշ Նավրուզովը շատ բացասական է գնահատել մարդու աշխատանքային իրավունքների պաշտպանության ակտվիստներին և իր գնահատականը կապել է նրա հետ, որ որոշ ակտիվիստներ ունեն որոշ չափով հայի արյուն:

Հրապարակումների մեկ այլ շարքում նշում են և ամոթանք են տալիս այն ադրբեջանցիներին, որոնք ինչ-որ կապ ունեն հայերի հետ: Օրինակ՝ մի հոդված հայտարարում է, որ պարզել է, որ ադրբեջանի խորհրդարանի պատգամավորներից մեկի տատիկը հայ է, կամ մի ռազմական գործի ամոթանք է տրվում նրա համար, որ իր կինը հայ է, կամ մի ադրբեջանցի արտիստ հանրային կերպով բարոյական խրատի է ենթարկվում հայ երգչի նվագակցությամբ մուղամ (ադրբեջանական ազգային երգ) կատարելու համար:

Նշված հրապարակումների մեծամասնությունը նպատակ ունեն արատավորել տվյալ անհատի համբավը: Որոշ դեպքերում նման հրապարակումների գոհերը հանդես են գալիս իրենց հայկական ծագումը կամ հայերի հետ կապը հերքող հայտարարություններով: Օրինակ, Ադրբեջանի խորհրդարանի անդամ Գյուլար Ահմեդովայի հետ հարցազրույց է հրապարակվել, որտեղ տիկին Ահմեդովան պատմում է իր տատիկի մասին՝ շեշտելով նրա ադրբեջանական ծագումը: Ավելին, նա պատմում է իր մանկությունից մի պատմություն, որում իր մայրը զգուշացնում է իրեն լինել զգույշ հայ երեխաների հետ խաղալիս՝ կոչելով նրանց «օձեր»: Խորհրդարանականը ավարտում է իր հարցազրույցը՝ ասելով, որ, մեծանալով ինքը եկել է նոյն եզրակացության, ինչ իր մայրը. «Երբ ես մեծացա՛ հասկացա, որ նրանք իսկապես փոքր օձեր են, և օձերը միշտ օձ են մնում»:

Եվ հակառակը, համացանցում և մամուլում հրապարակումները գովաբանում են այն ադրբեջանցիներին, որոնք դրսեւրել են հիմնական ադրբեջանական հասարակությանը հարիր հակահայկական վերաբերմունք: Օրինակ՝ մի հոդված գովաբանում է ադրբեջանցի երգչին, ով հրաժարվել է հանդիպել մի թուրք հայտնի երգչի, քանի որ վերջինիս ամուսինը հայ է:

Ադրբեջանյան ՀՀՍ-ները պահանջել են արգելել թուրքական արտադրության բաճկոնների վաճառքը, քանի որ դրանց գույները հայկական դրոշն են հիշեցնում, որից հետո վաճառողները սկսեցին հեռացնել այդ բաճկոնները վաճառասեղաններից:

Այսպիսով, ինչպես վերը նկարագրված է, ադրբեջանական լրատվամիջոցները լի են հայերի նկատմամբ ատելությամբ, ռասիզմով և այլատյացությամբ: Մեջբերված նյութերը ներկայացնում են համացանցում առկա նյութերի և հոդվածների միայն մի մասը:

Հոդվածները, հարցագրույցները, հայտարարությունները, տեսակետները ներկայացնում են ընդհանուր բացասական մթնոլորտը, որն առկա է հասարակությունում: Ինչպես նկարագրված է վերը, Ադրբեջանի նախագահի ատելության խոսքն ու ելույթները լարում են հասարակությանը:

Դիտարկված արարքների մեծ մասը, թեև իրականացվել է մասնավոր անհատների և տարբեր կազմակերպությունների կողմից, փաստացի վերագրելի են Ադրբեջանական Հանրապետությանը: Այսպես. համաձայն Միջազգային իրավունքի հանձնաժողովի պետության պատասխանատվության մասին հոդվածների՝ արարքը պետք է «ըստ միջազգային իրավունքի համարվի պետության կողմից կադրաված, եթե և այնքանով, որքանով պետությունը ճանաչել և ընդունել է արարքը, որպես իրենը»: Այս կանոնը կիրառվել է Արդարադատության միջազգային դատարանի կողմից 1980 թվականի Միացյալ Նահանգների դիվանագիտական և հյուպատոսական անձնակազմը Թեհրանում գործով որոշման մեջ, որը վերաբերում էր Իրանի պատասխանատվությանը՝ զինյալների կողմից ԱՄՆ-ի դիվանագիտական տարածքը շրջափակելը և անձնակազմին պատանդ վերցնելը չկանխելու համար:

Այդ գործով Իրանը պատասխանատու ճանաչվեց ոչ միայն դիվանագիտական տարածքների պաշտպանությունը ձախողելու համար, այլ, ինչպես նշեց Արդարադատության միջազգային դատարանը, նաև նրա համար, որ զինյալների արարքները հավանության էին արժանացել «Իրանի պետական մարմինների կողմից, և որոշումը պահպանել դրանք, վերափոխեցին դեսպանական շարունակական օկուպացիան և անձնակազմին պարանդ պահելը պետության կողմից իրագործվող արարքի»: Հավանությունն իր արտահայտումն է ստացել Իրանի մի շարք մարմինների կողմից և կրոնական առաջնորդ Այթոլլահ Խոմեյնի կողմից արված մի շարք հայտարարություններում, ով մասնավորապես ասել է. «Իրանի ժողովուրդը թույլ չի տա ազատ արձակել [պարանդներին]»:

Այս կոնկրետ դեպքում, Ադրբեջանի բարձր քաղաքական առաջնորդների կողմից ատելության խոսքը վկայում է, որ անհատների և կազմակերպությունների կողմից իրականացվող ռասիստական և այլատյաց արարքները, թեև վերջիններս մասնավոր են, հանդիսանում են Ադրբեջանի կողմից կատարված արարքներ: Հետևաբար. ակնհայտ է, որ Ադրբեջանը խախտել է Կոնվենցիայի 4-րդ և 7-րդ հոդվածներով սահմանված իր պարտավորությունները:

#### IV. 2016 թ. ԱՊՐԻԼԻ 2-5-Ի ԴԵՊՔԵՐԸ<sup>28</sup>

Վերլուծության են ենթարկվել Արցախի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գեկույցները և, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հենց վերջինիս կողմից է ամբողջությամբ և համակողմանիրեն իրականացվել փաստահավաք առաքելություն, իսկ դրա արդյունքը հանդիսանում է առավել ամբողջական և համակարգված տեղեկատվություն պարունակող փաստաթուղթ, որպես աղբյուր հիմնականում օգտագործվել է նշված գեկույցներում տեղ գտած տեղեկատվությունը, ինչպես նաև ԶԼՄ-ներում կատարված իրապարակումները:

2016 թվականի ապրիլի 2-5-ը Աղրբեջանն իրականացրել է զինված հարձակում Արցախի Հանրապետության տարածքի վրա՝ խախտելով միջազգային հարաբերություններում ուժի օգտագործումն արգելող նորմերը, և բացահայտ ունահարել է միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը: Հարձակման հիմնական թիրախն է դարձել սահմանամերձ և խորը թիկունքում գտնվող քաղաքացիական բնակչությունը: Աղրբեջանական բանակն իր զինանոցում գտնվող բազմաթիվ զինատեսակներից («ՄՄ-21» (Գրադ) տիպի հրթիռահրետանային կայանը և «Սմերչ» համազարկային կրակի ռեակտիվ համակարգ, ամենատարբեր տրամաչափի հրետանային միջոցներ (այդ թվում՝ 152մմ հրանոթներ), SOU-1Ա «Սոլնցեայոկ» ծանր հրանետային համալիր, ՄԻ-24 գրոհային ուղղաթիռներ, տանկեր ու այլ կարգի զրահատեխնիկա, գրոհային անօդաչու թռչող սարքեր) հրթիռա-հրետակոծման է ենթարկել Արցախի մի շարք բնակավայրեր, որի հետևանքով զոհվել ու վիրավորվել են խաղաղ բնակիչներ, այդ թվում երեխաներ, կանայք և ծերեր: Անվտանգության խնդիրներից ենելով՝ տարհանվել են Թալիշ, Մատաղիս, Մարտակերտ բնակավայրերի խաղաղ բնակիչները: Աղրբեջանական բանակի կողմից Արցախի խաղաղ բնակչության դեմ կատարված վայրագությունների ու անմարդկային բռնարարքների ապացույցները բազմաթիվ են:

Արցախի Հանրապետության դեմ Աղրբեջանի իրականացրած ագրեսիան խաղաղության և մարդկության դեմ ուղղված միջազգային հանցագործություն է:

Նոյն օրերին աղրբեջանական ագրեսիայից Արցախի խաղաղ բնակչությանը պաշտպանելու հարվածն իր վրա է վերցրել Արցախի Հանրապետության Պաշտպանության բանակը, որը ծեռնարկել է հնարավոր միջոցները՝ կասեցնելու ռազմական լայնածավալ հարձակումը:

**Դեպքերը՝ ժամանակագրական հաջորդականությամբ.**

<sup>28</sup> Սույն կարծիքի նպատակներով քննարկման առարկա են հանդիսանալու Աղրբեջանի զինված ուժերի կողմից 2016թ. ապրիլի 2-5-ն Արցախի դեմ զինված հարձակման շրջանակներում Թալիշ գյուղում թվով երեք խաղաղ բնակչի սպանության ու նրանց ոհիակների խեղման, ինչպես նաև Արցախի ՊԲ զինծառայողների նկատմամբ խոշտանգումների և զինծառայողների դիակների խեղման դեպքերի իրավական որակումը միջազգային իրավունքի տեսանկյունից:

- **Ապրիլի 1-ի լուս 2-ի գիշերը** աղբբեջանական կողմը Արցախի նկատմամբ սկսել է լայնածավալ հարձակողական գործողություններ, կիրառել է իր զինանոցում եղած ռազմական տեխնիկայի գրեթե բոլոր հնարավոր տեսակները:

Ժամը 10:00-ի սահմաններում Արցախի պաշտոնական աղբյուրները հայտնել են, որ աղբբեջանցիների կողմից խաղաղ բնակավայրերի հրթիռակոծության հետևանքով Արցախի Մարտունու շրջանի Չորավան գյուղում զոհվել է 12-ամյա Վաղինակ Շաթրովի Գրիգորյանը, ևս երկու երեխա վիրավորվել են և տեղափոխվել հիվանդանոց:<sup>29</sup>

- **Ապրիլի 3-ին՝** ժամը 06:00-ից սկսած, առաջնային գծի հարավային ուղղությամբ Աղբբեջանի զինված ուժերը հրթիռահրետանային միջոցների և զրահատեխնիկայի կիրառմամբ շարունակել են ագրեսիվ ռազմական գործողությունների վարումը:

Աղբբեջանական կողմը ապրիլի 3-ին հայտարարություն է տարածել, թե իբր միակողմանի դադարեցնում է կրակը, սակայն շարունակել է մարտական գործողությունները և Մարտակերտի խաղաղ բնակչների հրետակոծումը:<sup>30</sup>

- **Ապրիլի 3-ի լուս 4-ի գիշերը** շիման գծի ողջ երկայնքով աղբբեջանական կողմը ականանետներով ու հրանոթներով շարունակել է արկակոծել ՊԲ առաջնային դիրքերն ու մերձակա հայկական բնակավայրերը: Առավոտյան՝ ժամը 07:00-ի սահմաններում, առավել ինտենսիվ հրետակոծություններ են սկսվել շիման գոտու հարավարևելյան և հյուսիսարևելյան ուղղություններով:<sup>31</sup>

Աղբբեջանական զինված ուժերի հսկողության ներքո հայտնվել են ընդհանուր թվով 31 անձ կամ անձանց մարմիններ, որոնցից 26-ի նկատմամբ աղբբեջանական զինված ուժերի կողմից կատարվել են պատերազմական հանցագործություններ. Նրանք խոշտանգվել են, սպանվել կամ նրանց մարմիններն անարգվել են (ինչը հանդիսանում է պարերազմական հանցագործության դեսակ' մարդկային արժանապարփության դեմ ուղնագործություն): Ընդ որում, այդ հանցանքները կրել են համակարգված և կազմակերպված բնույթ, քանի որ կատարվել են բոլոր երեք աշխարհագրական ուղղություններով ապրիլի 2-ին արցախյան կողմի անձանց նկատմամբ հսկողություն հաստատած բոլոր աղբբեջանական զինվորական ստորաբաժանումների կողմից:<sup>32</sup>

Մասնավորապես՝ Շալիշում 3 անգեն քաղաքացիական անձանց նկատմամբ կատարվել է սպանություն և մարմինների անարգում, ծեր կնոջ նկատմամբ՝ նաև խոշտանգում, ինչը հաստատվում է փորձագետի եզրակացությամբ:

<sup>29</sup> <https://russian.rt.com/article/156800>, <http://razm.info/81666>

<sup>30</sup> <http://razm.info/81645>, <http://www.civilnet.am/news/2016/04/03/martakert-karabakh-frontline-escalation/289868>

<sup>31</sup> <http://razm.info/81727>

<sup>32</sup> Աղբբեջանական զինված ուժերի հսկողության ներքո հայտնված անձանց կամ նրանց մարմինների նկատմամբ կատարված հանցագործությունների մասին առանձին-առանձին առավել մանրամասն խոսվում է Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի երկրորդ միջանկյալ գեղուցում: Տե՛ս [http://ombudsnnkr.am/en/docs/Report\\_PUBLIC.pdf%20](http://ombudsnnkr.am/en/docs/Report_PUBLIC.pdf%20), էջեր 9-24

Բացի այդ, առկա է երկու զինծառայողների գլխատման դեպք, որոնցից առաջինը՝ մահացած վիճակում է եղել: Գլխատումը կատարվել է ողջ մնացած զինծառայողի ներկայությամբ:

Մյուս զինծառայողը գլխատվելիս ողջ է եղել:

## Վ.ԱՊՐԻԼՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԻՋԱՋԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈԴԻՍ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

Խաղաղ բնակչության (քաղաքացիական անձանց), ռազմագերիների, այն կոմբատանտների, ովքեր զենքը վայր են դրել կամ դադարել են պատերազմական գործողություններին մասնակցելուց հիվանդության, վիրավորվելու, բռնվելու կամ ցանկացած այլ պատճառով, սպանությունը ճանաչված է որպես միջազգային հանցագործություն (պատերազմական հանցագործություն):<sup>33</sup> Միջազգային սովորությային իրավունքի համաձայն: Մասնավորապես՝ դրանք որպես պատերազմական հանցագործություն են ճանաչվել Նյուրեմբերգի ու Տոկիոյի ռազմական տրիբունալների ու բազմաթիվ ազգային դատարանների կողմից, ինչպես նաև ամրագրված են որպես պատերազմական հանցագործություն նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական տրիբունալի և Միջազգային քրեական դատարանի կանոնադրություններում և աշխարհի պետությունների գերակշռող մասի քրեական օրենսդրությունում:<sup>34</sup> Նման արարքները նաև հանդիսանում են միջազգային մարդասիրական իրավունքի ու մասնավորապես 1949 թ. IV ժնկան կոնվենցիայի (հ. 147), ժնկան կոնվենցիաների ընդհանուր 3-րդ հոդվածի ու 1977 թ. Առաջին ու Երկրորդ արձանագրությունների (համապատասխանաբար հ. 75-2-ա ու հ. 42-ա) կոպիտ խախտում:<sup>35</sup>

Ադրբեյջանի զինուժի կողմից Թալիշ գյուղում երեք քաղաքացիական անձինք սպանվել են զինված գործողությունների իրականացման վայրից զգալի հեռավորության վրա, և այդ սպանություններն ակնհայտորեն իրականացվել են թիրախավորված կերպով ու առանց որևէ ռազմական անհրաժեշտության: Ուստի, դրանք ենթակա են որակման որպես մարդասիրական իրավունքի կոպիտ խախտում հանդիսացող խաղաղ բնակչության (քաղաքացիական անձանց) սպանություն և հետևաբար՝ պատերազմական հանցագործություն: Զուգահեռաբար այս արարքները խախտում են Ադրբեյջանի պարտավորությունները մարդու իրավունքների միջազգային իրավունքի ոլորտում՝ կյանքի իրավունքի մասով:

Նմանապես, կիրառելի կոնվենցիոն ու սովորությային նորմերի համաձայն միջազգային մարդասիրական իրավունքի լուրջ խախտում ու պատերազմական հանցագործություն է հանդիսանում նաև նման անձանց նկատմամբ խոշտանգումն ու ուժնձգությունը մարդկային արժանապատվության նկատմամբ. մասնավորապես՝ վիրավորական և նվաստացուցիչ վերաբերմունքը:<sup>36</sup> Նման արարքները խախտում են

<sup>33</sup> ICC Statute, Article 8(2)(a)(i) & (c)(i); ICTY Statute, Article 2(a); ICTR Statute, Article 4(a); Statute of the Special Court for Sierra Leone, Article 3(a) (*ibid.*, § 677); Jean-Marie Henckaerts, Louise Doswald-Beck, *Customary International Humanitarian Law: Volume 1, Rules*, Cambridge University Press, 2005, pp. 311-314

<sup>34</sup> Այն, որ Ադրբեյջանը չի վավերացրել ժնկան կոնվենցիաների արձանագրությունները, որևէ կերպ չի ազդում համապատասխան դրակման վրա, քանի որ խնդրո առարկա նորմերը հանդիսանում են սովորության իրավունքի կողիֆիկացիա, տես՝ *Military and Paramilitary Activities in and against Nicaragua (Nicaragua v. USA)*, merits, ICJ Reports 1986, § 218

<sup>35</sup> International Military Tribunal Charter (Nuremberg), Article 6(b), 1949 Geneva Conventions (I, II, III, IV), common Article 3; Geneva Convention (I) on Wounded and Sick in Armed Forces in the Field for the Amelioration of the Condition of the Wounded and Sick in Armed

«մարդասիրության տարրական նկատառումները»՝ մարդասիրական այն նվազագույն պահանջները, որոնք պետք է պահպանվեն բոլոր ու ցանկացած իրավիճակում<sup>36</sup>:

Միջազգային իրավունքում խոշտանգում է ճանաչված ցանկացած գործողություն, որի միջոցով մարմնական կամ մտավոր, ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված որևէ պատճառով պետական պաշտոնատար անձը կամ պաշտոնապես հանդես եկող այլ մարդ, կամ նրանց հրահրմամբ և գիտությամբ կամ լրելայն համաձայնությամբ որևէ անձի մտածված կերպով հասցնում է ուժեղ ցավ կամ տառապանք<sup>37</sup>: Տվյալ դեպքում փաստական համատեքստից ակներևույթ է, որ համապատասխան անձինք խոշտանգումների են ենթարկվել սոսկ իրենց ազգային պատկանելության, այսինքն՝ խտրականության վրա հիմնված պատճառով: Ուստի ադրբեջանական զինուժի համապատասխան արարքները միանգամայն հանդիսանում են խոշտանգում ըստ միջազգային իրավունքի, և ենթական են որակման որպես մարդասիրական իրավունքի կոպիտ խախտում ու միջազգային հանցագործություն:

Դիակների խեղումը միջազգային իրավունքում ճանաչված է որպես «մարդկային արժանապատվության դեմ ոտնձգություն» տեսակի պատերազմական հանցագործություն (տես, օրինակ՝ Միջազգային Քրեական Դատարանի կանոնադրության հիմ. 8-b-xxi և 8-c-ii) և միջազգային մարդասիրական իրավունքի խախտում (մասնավորապես՝ ժնկան կոնվենցիաների ընդհանուր 3-րդ հոդվածի, ինչպես նաև *a fortiori* Հազարի կոնվենցիայի (X) 16-րդ հոդվածով, ժնկան I Կոնվենցիայի 15-րդ հոդվածով, ժնկան II Կոնվենցիայի 18-րդ հոդվածով, ժնկան IV Կոնվենցիայի 16-րդ հոդվածով, և Արծանագրության 34-րդ հոդվածով ու II Արծանագրության 8-րդ հոդվածով սահմանված արգելվների խախտում):

Նոյնիսկ Ադրբեջանը դեռ 1993 թ. ներքին գործերի նախարարի մակարդակով ընդունել է, որ զոհված հակառակորդների դիակները չի կարելի խեղել<sup>38</sup>: Համապատասխանաբար, Թալիշ գյուղում սպանված խաղաղ բնակիչների, ինչպես նաև ՀՀ ՊԲ զինծառայողների դիակների խեղումը Ադրբեջանի զինուժի կողմից հանդիսանում է պատերազմական հանցագործություն և միջազգային մարդասիրական իրավունքի խախտում: Զուգահեռաբար այս արարքները խախտում եմ Ադրբեջանի պարտավորությունները մարդու իրավունքների միջազգային իրավունքի ոլորտում՝ դաժան ու անմարդկային վերաբերմունքի արգելքի մասով<sup>39</sup>:

Forces in the Field, 1949, Article 12, Article 50; Geneva Convention (II) for the Amelioration of the Condition of Wounded, Sick and Shipwrecked Members of Armed Forces at Sea, 1949, Article 12, Article 51; Geneva Convention (III) relative to the Treatment of Prisoners of War, 1949, Article 17, Article 87, Article 89, Article 130; Geneva Convention (IV) relative to the Protection of Civilian Persons in Time of War, Article 32, Article 147; ICC Statute, Article 8(2)(a)(ii) and (iii) and (c)(i), Additional Protocol I, Article 75(2); Additional Protocol II, Article 4(2); ICTR Statute, Article 4(a) and (e); Statute of the Special Court for Sierra Leone, Article 3(a) and (e); ); Jean-Marie Henckaerts, Louise Doswald-Beck, Customary International Humanitarian Law: Volume 1, Rules, Cambridge University Press, 2005, pp. 315-318

<sup>36</sup> Military and Paramilitary Activities in and against Nicaragua (Nicaragua v. USA), merits, ICJ Reports 1986, § 218; ICTY, Kunarac case, Judgement, 22 February 2001, §§ 466, 883, 886 and 888; ICTY, Furundzija case, Judgement, 10 December 1998, §§ 137-139, Part IX.

<sup>37</sup> Convention against Torture and Other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment, Article 1

<sup>38</sup> Azerbaijan, Ministry of the Interior, Command of the Troops of the Interior, Order No. 42, Baku, 9 Jan. 1993, § 5.

<sup>39</sup> Stu, օրինակ՝ Elberta v. Latvia (Application no. 61243/08), ECHR Judgment, 13 January 2015 (final: 13/04/2015), §§ 133-143

## ԵՇՐԱՎԱՆԳՈՒՄՆԵՐ

---

❖ Աղրբեջանական Հանրապետության կողմից ռասայական խտրականության քաղաքականությունն ապացուցվում է հետևյալ ուղղություններով.

(1) Աղրբեջանում հայերի նկատմամբ ընդհանուր առմամբ բացասական միջավայրի և թշնամության առկայությունը՝ հղում անելով ռասիստական մոտեցման առկայությունը փաստող պատմական վերաբերելի նախադրյալներին,

(2) Աղրբեջանի նախագահի և պետական իշխանության այլ մարմինների կողմից ատելություն սերմանող խոսք ինչեցնելու դեպքերը,

(3) համացանցի և ՀՀՄ-ների միջոցով թշնամության քարոզությունը,

(4) մարդու իրավունքների բացահայտ խախտումները՝ հիմնված ռասայական խտրականության վրա,

(5) Աղրբեջանի տարածքում հայերի մշակութային ժառանգության ոչնչացումը:

Վերոթվարկյալները հանդիսանում են համատարած, այն է՝ Աղրբեջանում հանրային կյանքի բոլոր ոլորտներում, ծանր հակահայկական միջավայրի և քաղաքականության առկայությունը փաստող միավորված ապացուցներ:

Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի ներկայացված խախտումները բավարար են նշելու, որ Աղրբեջանական Հանրապետությունն իրականացնում է համաձայնեցված, լավ կազմակերպված և կայուն ռասայական խտրականության քաղաքականություն հայերի դեմ:

Այս ամենը հակասում է Կոնվենցիայով սահմանված պետության պարտավորություններին: Մասնավորապես՝ Աղրբեջանի իշխանությունների վերը նշված հայտարարություններն ու գործողությունները հստակ կերպով խախտում են Կոնվենցիայի 4-րդ հոդվածը, համաձայն որի «Մասնակից պետությունները դարպապարդում են ցանկացած քարոզություն... որոնք փորձում են արդարացնել կամ իրախուսել ռասայական արելությունն ու խղրականությունը, ինչ ձևով էլ որ դրանք դրսևորվելիս լինեն. նրանք պարպապուրվում են ձեռնարկել անհապաղ ու դրական միջոցներ՝ ուղղված նման խղրականության ցանկացած հրահրում կամ իրականացում վերացնելուն»: Դրանք նաև խախտում են 4-րդ հոդվածի (գ) մասում սահմանված հատուկ կանոնը, որը նախատեսում է, որ Կոնվենցիային մասնակից պետությունները «պետական իշխանության ազգային կամ դեղական մարմիններին կամ պետական հասկապություններին չեն թույլադրում իրախուսել կամ հրահրել ռասայական խղրականություն»:

Աղրբեջանի բարձր քաղաքական դեկավարության կողմից հայերի և Հայաստանի Հանրապետության դեմ էթնիկ ատելություն հրահրող հայտարարությունները խախտում են Կոնվենցիայի 2-րդ հոդվածով սահմանված

պողիտիվ պարտավորությունները. մասնավորապես՝ ընդհանուր պարտավորությունը՝ «դատապարտել ռասայական խտրականությունը», ընդհանուր պարտավորությունը՝ «անհապաղ, բոլոր հնարավոր եղանակներով վարել բոլոր ռասաների միջև փոխըմբռնմանը նպաստող քաղաքականություն», ինչպես նաև նույն հոդվածի (ա) մասում սահմանված հատուկ պարտավորությունը՝ ապահովել, որ «պետական բոլոր մարմիններն ու հաստատությունները, ինչպես ազգային, այնպես էլ տեղական, կգործեն այդ պարտավորությանը համապատասխան»:

❖ Ապրիլյան պատերազմի մասով ամփոփելով՝ հարկ է ընդգծել, որ Ադրբեջանի գինութը խաղաղ բնակչության ու գինվորականների հանդեպ թույլ է տվել միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի լուրջ խախտումներ, որոնք նաև ենթակա են որակման որպես պատերազմական հանցագործություններ: Խոսքը, մասնավորապես, քաղաքացիական անձանց ու պատերազմական գործողություններին մասնակցությունը դադարեցրած գինվորականների սպանությունների, ինչպես նաև խոշտանգումների ու դիակների խեղման դեպքերի մասին է:

❖ Արցախի ժողովրդի իրավական պահանջի մասով հարկ է ևս մեկ անգամ նշել, որ Արցախի ժողովուրդն իրականացրել է իր ինքնորոշման իրավունքը միջազգային իրավունքի համաձայն, և Ադրբեջանը չի կարող այդ իրավունքի իրականացմանն առարկել տարածքային ամբողջականության կամ սու՝ possidentis սկզբունքների հիման վրա: Միաժամանակ Ադրբեջանի հայատյաց քաղաքականությունը բացառում է Արցախի հայությանը որևէ եղանակով Ադրբեջանի իրավագորության ներքո բերելու հնարավորությունը, ու ևս մեկ անգամ հաստատում է Արցախի ինքնորոշման այլընտրանք չունեցող բնույթը: